

7660

1997 May

910.4

21-9322



31

# ՍՏԵՂՈՎ

# ՆՐԱ ԿԵՍՆՔԸ, ԳԻՒԽՏԵՐԸ

910-4

U-930

三

卷之三

## ՎԵՐՁԻՆ ՏԱՆՏՎԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ



ԱՀԿԱՏԱՄԻՐԵՑ

## Ե. ՄԻՐՋԱ-ԱԽԱԳԵԱՆՑ

2004

F U G U H

Տպարան Շահըսդեմանի


1897

33527-4.4.

Дозволено цензурою. Тифлисъ, 24 февраля 1897 г.

(523-50)

16244-58



# ԱՏԷՆԼԻ

Յ Ա. Ռ Ա. Զ Ա. Բ Ա. Կ.

Նոր զիւտեր անել, մանել այնաեղ, ուր դեռ մարդկացին սարչէ կոխել, եղել է մարդկացին յառաջադիմութեան խթաններից մէկը: Պատմութիւնը յիշում է շատ երեսի ճանապարհորդներ՝ Կոբումբոսը, Կուկը, Մագելլանը և այլք, որոնք միշտ կը մնան նրա էջերումը: Նովատակները եղել են զանազան: Մէկ քանիսը փնդուել են նոր հարուստ երկիրներ, որոնց կարելի լինէր միացնել իրանց աէրութեանը, միւսները լոկ գիտութեան համար էին ճանապարհորդում, նկարագրելով և ուսումնասիրելով նոր երկիրներ, երրորդները աշխատում էին զանել յարմար և կարձ հաղորդակցութեան ճանապարհներ և այլն:

Այդ ճանապարհորդութիւնների պատճառներից մէկը ևս եղել է հետեւալը: Երբ որ մի երկիր լցվում է ժողովրդով, յայտնի բան է, որ զբանք կաշխատեն մի ուրիշ տեղ զանել իրանց աւելորդը այնտեղ բնակեցնելու համար: Ահա այդպիսի գրութեան մէջ էր հին նւրոպան: Բայց, չնորհիւ նոր զաած հողերին, նա կարողացաւ իր բնակիչների աւելորդը այդ նոր երկիրները արատագրել:

Մի քանի տասնեւակ տարիներ առաջ Նւրոպացի աէրութիւնները աշխատում էին զանել նոր հողեր, որտեղ կարելի կը լինէր բնակեցնել իրանց ազգաբնակութեանց աւելորդը: Եւ ահա, չնորհիւ մի մարդու, համարեայ բոլոր եւրոպական տէրութիւնները իրանց աչքը դարձնում են դէպի այն երկիրը՝ Աֆրիկան, որը դեռ երեկ հաշվում էին անապատ, և այնտեղ ահազին հողեր գրաւում: Անգիւացինները գերմանացինները, ֆրանսիացինները, սպանիացինները, փոքրութայիշցինները և մինչև անգամ իտալացիք արդէն գրաւել էին ահազին տեղեր: Առաջ հաշվում էին միջին Աֆրիկան մի անմարդաբնակ անապատ, ուր կեանք չը կայ, բայց յանկարծ յայտնիում է, որ այդ հողերը աշխարհիս ամենահարուստ հողերից մէկն է և ունի խիստ ազգայինակութիւն: Բայց մվ էր այն մարդը, որը հաղորդեց այդ տեղեկութիւնը և ազգական իրարանցումն զցեց եւրոպական տէրութիւնների մէջ, որոնք վախենում էին, որ չի լինի թէ ուշանան և իրանց բայն-չը հասնի:

Այդ մարդը Ստէնլին էր: Բայց, չը նայած նրա բոլոր կատարած  
գործերին, նրան չատ վիրաւորել են ու չարախուել և, ինչպէս կը  
տեսնի յետոյ ընթերցողը, այդ եղել են զրաբարտութիւններ: Մենք  
այստեղ կը պատմենք Ստէնլիի կենսագրութիւնը, որը ունի կրթական  
շատ կողմեր, նրա արած երեք ճանապարհորդութիւնները և ապա, —  
որը և կազմում է այս զրքի զլաւոր նիւթը, — նրա չորրորդ ճանա-  
պարհորդութիւնը Էմին-փաշային ազատելու համար:

Ստէնլիի կենսագրութիւնը ունի կրթական այն կողմները, որ  
դուք տեսնում էք, թէ ինչպէս մի դաստարկածեռն մարդ, զուրկ ամեն  
ինչից, չնորհիւ միայն իր գործունէութեանը և հաստատ կամքին,  
ոչնչութիւնից բարձրանում է կամաց-կամաց և կանգնում երևելի  
մարդկանց շարքում:

Այս զրքոյկը զրելիս օգտվել ենք Հետեւալ ազբիւրներով.

Стэнли. Въ дебряхъ Африки.

Стэнли. Биографич. библ. Павленкова.

Путешествіе Стэнли для освобождения Эмина-паші.

Стэнли, его жизнь и путешествія և т.д.

## ՍՏԵՆԼԻ,

ՆՐԱ ԿԵԱՆՔԸ, ԳԻՒՏԵՐԸ,

ԵՒ

ԱԵՐՁԻՆ ՃԱՆԵՎՊԱՇՅՈՒԹՈՒԹԻՒՆԸ

I.

1841 թ. յունվարի 28-ին Դէնրիգ՛ Փոքրիկ քաղաքում,  
Հիւսիսային Ուէլսում, ծերունի Մօդէս Պէրսիի տանը,  
աւելանում է ևս մի անդամ: Նատ էլ չէր ուրախ Պէրսին,  
որովհետեւ ինքն էլ հազիւ-հազ էր կերակրվում: Զը նայած,  
որ այդ ծնունդը ապօրինի էր, որովհետեւ ծննդկանը, իր  
աղջիկը, խաբվում է իրանց հարեւան հարուստ երկրագործի  
որդուց, Զօն Շոուլէնդից, նա, իր ըարի քնութեան համե-  
մատ, շատ էլ իիստ չէ նայում աղջկայ այդ սխալմունքի  
վրայ և սիրով է ընդունում իր թոռանը: Որովհետեւ երեխայի  
հայրը հրաժարվել էր որ և իցէ օգնութիւն հասցնելուց,  
այդ պատճառով նրան կրթելու ու պահելու բոլոր ծանրու-  
թիւնը ընկնում է առանց այն էլ աղքատ ընտանիքի վրայ:  
Պապը շատ սիրում էր իր թոռանը և միշտ կրկնում էր  
եղել, թէ գրանից ապագայում երեւելի մարդ գուրս կը գայ:  
Պժբաղդաբար նա շուտով կաթւածահազար է լինում և մեռնում:

Այդ կորուստից յետով խեղճ աղջկայ գրութիւնը աւելի ևս վատթարանում է, որովհետև Բոռլլէնդը նորից հրաժարվում է օգնութիւն հասցնելուց և մանաւանդ որ նրա բարեկամները հրաժարվում են նրանից, ի նկատի ունենալով ապօրինի ծնունդը:

Շուտով մեռնում է և Զօն Բոռլլէնդը մի գինետնում կովելուց յետոյ:

Բէթսին, —այդպէս էր կոչվում Մօղէս Պէրսիի աղջիկը, — վերցնում է իր երեխալին և տալիս հարուստ հարեւան Պրէլսի ընտանիքը՝ կրթելու և իր ամբողջ աշխատանքը տալիս է նրանց: Բայց Պրէլսը վերցրել էր երեխալին իսկապէս ոչ թէ կրթելու, այլ բանեցնելու, և սաստիկ վատ էր վարվում հետք: Նրա վարվողութիւնը, առանց այն էլ կոսիտ, աւելի ևս վատթարանում է, երբ Բէթսին չի կարողանում վճարը հասցնել:

7 տարեկան հասակում նրան ուղարկում են Սէնթ-Ազաֆ քանորական տունը: Մենք բոլորս նրան խղճում էինք, —ասում է մէկ բարեկամը, —նա այնպէս խելօք և հասկացող երեխալ էր:

Բանտորների տանը փոքրիկ Զօնը, —այդպէս էին նրան կոչում, —մնում է մինչև 15 տարեկան հասակը: Այդ ժամանակամիջոցում նա ահագին ծեծեր է ուտում: Առհասարակ քանորական տան կարգերը խիստ վայրենաթարուի էին, ամեն մի սխալմունքի հետևանքը ծեծն էր լինում: Այսուեղ նա անցնում է այն բոլոր ուսումը, որ աւանդում էին: Նա պարապում էր նաև ընթերցանութեամբ, դլխաւորապէս ձանապարհորդութիւնների նկարագիրները կարդալով:

1856 թ. Զօնի մէկ բարեկամուչին, ցանկանալով մի բարի բան անել նրա համար, տանում է իր մօտ և յանձում նրան իր ոչխարները պահել: Իհարկէ նա չէր կարող միշտ մնալ հովիտի պաշտօնում և աշխատում էր մի ուրիշ գործ ճարել: Այդտեղ նա պատահում է ծառակամուշ Օրլէան: Մի քանի օրից յետոյ շղենաւը հասցնում է Զօնին նոր Օրլէան: Նոր քաղաքում Զօնը շրջում էր փողոցները մի գործ ճարելու համար և կարդում էր բոլոր յայտարարութիւնները: Մի դուսն վրա նա տեսնում է կպցրած մի թուղթ, որտեղ գրված է լինում. «Հարկաւոր է մի տղայ»: Զօնը իսկոյն մտնում է խանութը, և խանութպանը, որի անունն էր Ստէնլի, շատ սիրալիր ընդունում է նրան:

պաշտօնը Մօլթի ուսումնարաններում, անցնում է նրա մօտ իբրև օգնական: Դժբաղդաբար նոր բարերարը շատ տղէտ և ինքնահաւան մարդ էր: Նա հարկադրում էր իր օգնականին սրբել կօշիկները, աւելել սենեակները և առհասարակ կատարել բոլոր կեղտոտ գործերը: Այդպիսի հանգամանքներում Զօնը չէր կարող երկար մնալ և ահա, մի փոքրիկ գումար հաւաքելով, նա ուղևորվում է դէպի Լիւերպուլ:

Լիւերպուլում Զօնը բնակվում է իւր բարեկամուչու տանը: Դժբաղդաբար նա այսուեղ էլ հանգիստ կեանք չէ վայելում: Բանը նրանումն էր, որ այդ բարեկամուչին ունէր մի որդի, որի բնութիւնը շատ կուարար էր, և պարզ է, որ բոլոր կակալները Զօնի գլխին էին կոտրատվում: Այդտեղ նա ծառակամում էր մի մսավաճառի մօտ և իր բոլոր աշխատանքը հազիւ բաւականանում էր տան վճարը տալու համար: Նա մտադիր էր գնալ Ամերիկա, իսկ դրա համար հարկաւոր էր ճանապարհի ծախք, որը նա չունէր. գուրս գալով իր բարեկամուչու տնից, նա գնում է նաւահանգիստ և այնտեղ պարապվում է բեռնակրութեամբ: Զրկելով իրան ամեն ինչից, նրան յաջողվում է մի փոքրիկ գումար շինել: Տեսնելով, որ այդպէս դեռ շատ պիտի չարչարպի, նա գնում է մի նաւապետի մօտ և, տալով նրան իր հաւաքած փողերը, խնդրում է իրան ընդունել նաւի վրայ և հասցնել Ամերիկա, իսկ մնացած 10 ըուբլիի փոխարէն, որ նա չունէր լիովին վճարը տալու համար, խոստանում է ծառայել մինչև նոր Օրլէան: Մի քանի օրից յետոյ շղենաւը հասցնում է Զօնին նոր Օրլէան: Նոր քաղաքում Զօնը շրջում էր փողոցները մի գործ ճարելու համար և կարդում էր բոլոր յայտարարութիւնները: Մի դուսն վրա նա տեսնում է կպցրած մի թուղթ, որտեղ գրված է լինում. «Հարկաւոր է մի տղայ»: Զօնը իսկոյն մտնում է խանութը, և խանութպանը, որի անունն էր Ստէնլի, շատ սիրալիր ընդունում է նրան:

— Ի՞նչ գործ կարող ես կատարել, սիրելիս, հարցնում է նա: — Ինչ որ իմ հասակիս տղայի ձեռքով կարող է գալ, պատասխանում է Զօնը:

Խանութպանը վերցնում է Զօնին և, նկատելով նրա մէջ լաւ ընդունակութիւններ, գարձնում է իր գլխաւոր գործակատարը, իսկ յետոյ էլ որդեգրում է նրան: Աշա այդպիսով Զօնը դառնում է Հէնրի Մօթօն Ստէնլի: Խեղճ խանութպան, կարող էիր արդեօք երեակայել, որ գրանով գուքո անունը անմահացնում են: 1861 թ. Ստէնլին մեռնում է և Հէնրին մնում է փողոցումը, որովհետեւ նրան որդեգրող խանութպանը ոչ մի կտակ չէ թողնում և այդպիսով նրա բոլոր կարողութիւնը անցնում է բարեկամների ձեռքը:

Նորից սկսվում է Ստէնլիի համար ապրուստ որոնելու չարչարանքը: Այդ ժամանակ սկսվում է ամերիկացիների մեծ պատերազմը: Հիւսիսային ամերիկացիք պատերազմում էին հարաւային ամերիկացիների դէմ ստրկութեանը վերջ տալու համար: Աշխարհիս առաջաւոր մարդկանց համակրանքը հիւսիսայինների կողմն էր, որովհետեւ նրանք կատարում էին պատմական մեծ գործերից մէկը:

Ստէնլին մտնում է հարաւայինների զօրքը և քաջ ժեներալ Զօնստօնի: Հրամանատարութեան տակ մասնակցում է շատ կոիւների մինչև Բիթսբուրգի պատերազմը, որը կատարվում է 1862 թ., և այդտեղ վերցնվում է գերի: Նրան մի քանի ուրիշ գերիների հետ, զինուորական հսկողութեան տակ, ուղարկում են գլխաւոր զինուորական դատաստանը, ուր նա պիտի դատվէր և դատապարտվէր մահվան պատժին: Զինուորական կեանքը նրան մաշել էր և նա այնքան նիշարել էր, որ մորթն ու ոսկորն էին մնացել, և աշա այդ նիշարութեան շնորհիւ նա ազատվում է: Անցնելով վանդակի փայտերի միջով, որի մէջ նրանց տանում էին, նա իրան պցում է գետը:

Զինուորները սկսում են արձակել հրացանները, բայց նրան յաջողվում է հասնել անտարին և այնտեղ թագնվել:

Այդ փորձանքից ազատվելով և փոքր ինչ կազդուրվելով կրած նեղութիւններից, նա սկսում է մտածել, որի կողմը այժմ բռնել, և այս անգամ, իր համոզմունքի համեմատ, վճռում է անցնել հիւսիսայինների բանակը: Երբ որ Ստէնլին երեսում է հիւսիսայինների հողումը, նրան ցանկանում են բռնել և դատել իրեւ փախստական գերին, բայց նրան արձակ են թողնում, որովհետեւ նա յալտնում է իր ցանկութիւնը մտնել իրեւ կամաւոր նաւաստի հիւսիսայինների նաւատարմիզը: Մի անգամ Ստէնլիին յաջողվում է իր քաջութիւնը ցոյց տալ: Թշնամիների շոգենաւը, շնորհիւ հիւսիսայինների ռումբերին, զրկվել էր պաշտպանվելու և շարժվելու կարողութիւնից, բայց նրան չէին կարողանում վերցնել, որովհետեւ նա քաղաքային ամրոցների թնդանօժների պաշտպանութեան ներքոյ էր:

Ստէնլին շորերը հանում է, լողում է գէպի նաւը, ըլ նայած որ շուրջը կարկտի նման ռումբեր և գնդակներ էին թափվում, կապում է թոկի ծալը նաւից, որով կարելի է լինում հարուստ աւարը վերցնել: Այդ քաջութեան համար նա ստանում է սպայի աստիճան և տարեկան թօշակ մօտ 3500 ը.: Բացի այդ պատերազմից նա մասնակցում է շատ կոիւների:

Պատերազմը վերջանալուց յետոյ Ստէնլին գնում է հայրենիքը, իր մօրը և բարեկամներին տեսնելու: Երեակալեցէք մօր ուրախութիւնը, երբ տեսնում է իր որդուն գեղեցիկ սպայի շորերով և այդ աստիճանի հասած միայն իրան շնորհիւ: Այժմ ծանօթներն էլ աշխատում էին նրան մօտենալ և չէին խորշում առաջգալ պէս: Հայրենիքում Ստէնլին այցելում է իր բոլոր եղած տեղերը, նոյնպէս պապի գերեզմանը: Օգնելով մօրը, ինչքան որ միջոց ունէր, նա իր երկու ընկերներով մտադիր է լինում ճանապարհոր-

դել Փոքը Ասիայով և անցնել Երուսաղէմ։ Այդ ճանապարհորդութիւնը անյաջող է լինում։ Զմիւռնալի մօտ նրանց ձերակալում են և, երբ բաց են թողնում, ճանապարհին, դարաւոր սովորութեան համեմատ, յարձակվում են աւազակները և ոտից մինչեւ գլուխ մաքրում, այսպէս որ նրանք հաջու-հազ հասնում են Պօլիս, համարեալ թէ մերկ։ Այստեղ Ստէնլին պիտի դեռ իրան պաշտանէր, որովհետեւ քուրդ աւազակները, նրան և ընկերներին մաքրելով, յանձնում են նրանց կառավարութեան երրեւ աւազակների։ Այդ եղելութիւնը Ստէնլինն կարագրում ու տպագրում Պօլսում Հրատարակող „,Levant Herald“-ում և ունենում է մեծ յաջողութիւն։ Նորհիւ ամերիկական հիւպատոսին, նրան և իր ընկերներին յաջողվում է ստանալ տաճկաց կառավարութիւնից բաւարարութիւն։

Թղթակցութեան այդ յաջողութիւնը նրա գլխումը միտք է յղացնում նեփել իրան այդ գործին։ Աերագառնալով իր այդ անյաջող ճանապարհորդութիւնից Ամերիկա, նա, իբրև թղթակից „,Missouri Democrat“ և „New-York Tribune“, լրագիրների, գնում է ժեներալ Շեմանի հետ, որը գնում էր Սիու կոչված Հնդիկ ցեղի դէմ։ Շուտով Շեմանը յաղթում է իր զինեալ զօրքերով վայրենի անզէն կարմրամորթներին, որոնցից լուսաւորված ամերիկացիք շարունակ խլում են նրանց սեփական հողերը, և այդպիսով պատերազմը վերջանում է։ Ստէնլին, վերագառնալու փոխարէն, մէկ մարդու ընկերակցութեամբ ճանապարհորդում է մինչև Միսսուրի գետը։ Նրա բոլոր թղթակցութիւնները ընդհանուր ուշագրութիւն են գրաւում, մանաւանդ նրա յօդուածները, որոնց մէջ նա պաշտպանում էր խեղճ կարմրամորթներին վերջնական ջնջումից։

Այդ յաջողութիւնից յետոյ Ամերիկալի մի մեծ լրագիր, „New-York Herald“, Հրաւիրում է նրան իբրև թղթակից,

տարեկան 8000 բուքլի ոռճկով, որ նա գնալ Հարէշտան, ուր անգլիացիք զօրք էին ուղարկում այդ երկրի Թէօդոր թագաւորին պատժելու, որ անգլիացւոց հիւպատոսին և մի քանի անգլիացիների բանդ է գցում։ 1867 թ. նրանից պահանջում են, որ նա ազատի բանդարկեալներին, իսկ երբ նա մերժում է, զօրք են ուղարկում ժեներալ Նէպերի հրամանատարութեամբ։

Մինչև Հարէշտան գնալը Ստէնլին գնում է Լօնդոն և Հրաւիրում է այնտեղ իր մօրը։ Պէտք է ասած, որ Ստէնլին շատ սիրում և յարգում էր մօրը։ Դեռ փոքր հասակից, երբ ոչ մի տեղից ոչ մի կարեկցութիւն չէր տեսնում, մօրը ցոյց տուած սէրը, պարզ է, որ խոր պիտի թափանցէր նրա սիրտը և, ինչպէս մենք կը տեսնենք, այդ սէրը և յարդանքը նա ցոյց է տալիս մինչեւ նրա կենդանութեան վերջին օրը։

Ստէնլիի մայրը տանում է որդուն նորից իր ծննդավայրը, այս անգամ լոկ ինքնասիրութեան պատճառով, որ բարեկամները տեսնեն, թէ ինչպիսի մարդ է գարձել իր որդին։ Այն նեղութիւններից և տանջանքներից յետոյ, որ կըել է խեղճ կինը իր որդու համար, նրան ներելի էր այդ փոքրիկ եսականութիւնը։ Ծննդավայրում նրան շատ լաւ են ընդունում և այնտեղ նա սիրահարվում է օրիորդ Հոփի վրայ, որը նոյպէս սիրահարվում է Ստէնլիի վրայ։ Հարսանիքը յետաձգում են, մինչև որ Ստէնլին վերագառնայ Հարէշտանից։ Բայց օրիորդը իր խոսքին հաստատ չի մնում և մարդու է գնում մի ճարտարապետի։

Տեղեկութիւններ չունենալով ոչ երկրի մասին և ոչ էլ այնտեղ պատերազմ վարելու եղանակներին, Ստէնլին շտապ ճանապարհ է ընկնում կուի դաշտը, ունենալով իր հետ միալն մի գոմէշի կաշի, որը նրա համար վահան էր և միւնուն ժամանակ վերմակի գեր էր կատարում։

Այդ սիսալի պատճառով նա կրում է ամեն տեսակ նե-

զութիւներ թէ ցրտից և թէ քաղցից։ Այդ պատերազմում անգլիացիք յաղթող են հագիսանում և ազատում իրանց գերիներին։ Երբ յուսահատված Թէօդոր թագաւորը անձնասպանութիւն է գործում, Ստէնլին առաջինն է հասնում հեռագրատունը և այդ լուրը հեռագրում։ Երբ ուրիշ լրագիրների թղթակիցներն էլ ցանկանում են հեռագրել, Ստէնլին բացում է աւետարանը և սկսում է մէկ-մէկ երես հեռագրել, և այդպիսով թողլ չէ տափս ոչ ոքին մօտենալ։ Այդ հեռագիրը շատ թանգ է նստում „New-York Herald“-ի վրայ, բայց որովհետեւ այդ լուրը նա մի օր առաջ է հրատարակում միւս թերթերից, նրա համարները ահագին քանակութեամբ են ծախվում և, բայց ծախքերը ծածկելուց, նա մեծ օգուտ է ստանում։ Այդ օրվանից Ստէնլիի անունը միանգամայն յայտնի է գառնում։

Վերադառնալով Հաբէշստանից, նա, իբրև „New-York Herald“-ի թղթակից, ճանապարհորդութիւններ է կատարում Փոքր Ասիայում, ուր առաջին անգամը անյաջողութիւն է կրում, այնտեղից ուղեսորդում է Սուէց, որը ուսումնասիրում և նկարագրում է, Սուէցից անյնում է Սպանիա, որ ներքին խոռովութիւններ էին կատարվում։

Հոկտեմբեր ամսին 1869 թ. նա ստանում է „New-York Herald“-ի յայտնի հրատարակիչ Գորդոն Բէննէտից հետեւեալ կարճառօտ հերագիրը։ «Եկէք Փարիզ մի կարևոր գործի համար»։ Ստէնլին թէսէլտ անձամբ չէր ճանաչում Բէննէտին, բայց գիտէր, որ նա մարդու իզուր չէր անհանգստացնիլ, ուստի առանց ուշացնելու ուղեսորդում է Փարիզ։

Հասնելով քաղաքը գիշերով, նա խսկոյն գնում է „Grand Hotel“ հիւրանոցը, ուր բնակվում էր Բէննէտը։

Լսելով մարդու ձայն, Բէննէտը, որը անկողնումն էր այդ ժամանակ, գուռը բացում է և ներս ընդունում։ Հրատարակիչը և թղթակիցը առաջին անգամն էին միեանց տեսնում։

— Ո՞վ էք գուք, հարցնում է Բէննէտը։  
— Իմ ազգանունս Ստէնլի է, պատասխանում է Ստէնլին։  
— Ա՛, նստեցէք, ես ունիմ շատ կարևոր յանձնարարութիւն ձեզ համար։ Ի՞նչպէս էք կարծում, ո՞րտեղ կը լինի ալժմս Լիւինգստոնը։

— Զը գիտեմ, սէօր։  
— Կենդանին է նա, ի՞նչպէս էք գուք կարծում։  
— Գուցէ կենդանին է, գուցէ ոչ։  
— Բայց ես կարծում եմ, որ նա կենդանի է և որ նրան կարելի է գտնել. ես ձեզ խնդրում եմ այդ կատարել։  
— Ի՞նչպէս, ես պիտի գնամ կենտրոնական Աֆրիկա և այնտեղ անյալտ երկիրներում Լիւինգստոնին փնդում։ Դուք այդ ի նկատի ունէք։

— Այն, ես յանձնում եմ ձեզ գտնել Լիւինգստոնին, ուր որ էլ նա լինի, և հաւաքել նրա մասին բոլոր հնարաւոր տեղեկութիւնները։ Դուք կը վերցնէք այն ամեն ինչը, որ կարող է նրան հարկաւորվել։

— Իսկ դուք մտածէլ էք, թէ որքան այդ կը նստի ձեր վրայ։  
— Ո՞րքան կարող է նստել։  
— Ոչ պակաս քան 25,000 ըուբլի։

Դէս, դուք կը վերցնէք 10,000 ըուբլի, յետոյ էլի 10,000, յետոյ էլի նոյնքան, և այդպէս կը շարունակէք, բայց անպատճառ գտէք Լիւինգստոնին։

Այդպիսով Ստէնլին յանձն էր առել գտնել Լիւինգստոնին, որը կորած էր կենտրոնական Աֆրիկայի խորքերում և որին ամենքը հաշվում էին մեռած։ Բայց այդ ճանապարհորդութիւնից, նա պէտք է ներկայ գտնվէր Սուէցի բացման հանդիսին, տեղեկութիւններ հաւաքէր յայտնի ճանապարհորդ Բէկկերի մասին, որը պատրաստվում էր այցելել Վերին Եգիպտոսը, կազմէր ուղեցոյց Ներքին Եգիպտոսի մասին, նկարագրելով ինչ որ արժանի էր ուշագրութեան։

Եղիպտոսից պիտի անցնէր Երուսաղեմ, որտեղից պիտի ուղևորվէր կ. Պօլիս, Ղըբմ՝ նկարագրելու պատերազմի դաշտերը, այնտեղից Կովկաս, ինտոյ Պարսկաստան և ապա Հնդկաստան, որտեղից պիտի գնար Լիւինգստոնի լետեից:

Այդ մի ահագին ճանապարհորդութիւն էր, որտեղ նա կարող էր ենթարկվել զանազան փորձանքների: Մինչև ճանապարհ ընկնելը Ստէնլին ցանկացաւ տեսնել իր մօրը: Ո՞վ գիտէ, դուցէ նա այլ ևս չը տեսնէ նրան: Որովհետեւ ժամանակը չէր ներում, որ ինքը գնալ, ուստի նա հեռագրով բերել է տալիս իր մօրը Փարիզ:

Տեսնվելով մօրը հետ, նա ուղարկում է նրան տուն, իսկ ինքը ճանապարհ ընկնում: Համեմատ իր ծրագրին, նա անցնում է բոլոր վերև լիշված երկիրները և յունվարի 6-ին 1871 թ., ալսինքն 30 տարեկան հասակում, հասնում է Զանգիբար, որտեղից պիտի դուրս գար Լիւինգստոնին գտնելու: Այդտեղ նա ծանօթանում է անգլիացի Զօն Շուի հետ և մէկ ուրիշ եւրոպացու, որոնք համաձայնվում են ընկերակցել նրան իր առաջիկայ ջանապարհորդութիւնում:

\* \*

Մենք ալսուել պէտք է մի քանի խօսք ասենք Լիւինգստոնի մասին, որի համար ամբողջ քաղաքակրթված աշխարհը երկիւղ էր կրում և անգիտութեան մէջ էր նրա վիճակի մասին, մանաւանդ որ լուրեր էին տարածվում, թէ Լիւինգստոնը մեռել է:

Դաւիթ Լիւինգստոնը ծնվում է մարտին 1813 թ.: 20 տարեկան հասակում նա բռնկվում է կրօնական զգացմունքով և միակ ելքը իր մեղաւոր կեանքից տեսնում է կրօնի մէջ: Դրա հետեւանքը այն է լինում, որ նա ցանկանում է գնալ Զինաստան միսսիօնարի պաշտօնով, բայց որովհետեւ այդ ժամանակ անգլիացիները պատերազմում էին չինացիների հետ, նա փոխում է իր վճիռը: Այդ երկրորդ ճանապարհորդութիւնումը նա կորցնում է իր կնոջը, որ մեծ վիշտ է պատճառում նրան:

Նա ձեռնադրվում է միսսիօնար և Լօնդօնի միսսիօնարական ընկերութիւնը նրան ուղարկում է Կաֆլանդ քարոզչի պաշտօնով: Քրիստոնէական լուսը վայրենի երկիրներում տարածելը իր կեսնքի միակ նպատակը դարձնելով, նա 1849 թ. սկսում է ճանապարհորդել դէպի Աֆրիկայի խորքերը. անցնում է մինչև Նհամի լիճը, Զամբէզի գետով գնում է մինչև Լօանդան և գտնում է Վիկտորիա ջրվէժները Զամբէզի գետի վրայ, լետոյ վերադառնում է Հայրենիքը և Հրատարակում՝ „Missionary travels and researches in south Africa“:

Միջպէս այդ ճանապարհորդութիւնը, այնպէս էլ լետակայ ճանապարհորդութիւնները, նա կատարել է աւետարանը ձեռին, քարոզելով վայրենի սեամորթներին նրա սուրբ սկզբունքները:

Նրան յաջողգում է բազմաթիւ սեամորթներին քրիստոնէութեան դարձնել և նրա իմաստը ներշնչել:

Հայրենիքում նրան մեծ պատուվութառքով են ընդունում և իր կատարած գործերի համար տալիս են ոսկէ մեղացը: Հանգստանալով հայրենիքում, մարտի 10-ին 1858 թ. նա իր կնոջ և որդու հետ նորից ուղեսորվում է դէպի իր սիրած երկիրը:

Այդ երկրորդ ճանապարհորդութիւնում նա գտնում է Նիիսսա լիճը, որը սկիզբն է տալիս Զամբէզի գետին և որի մօտ գտնվում է Նիրվա լիճը: Նրա գլխաւոր նպատակն էր ոչ այնքան գիւտեր անելը, ինչքան տարածել քրիստոնէութիւնը և վերջ տալ ստրկութեանը: Բայց այդ ահագին գործը մի մարդու գործ չէր, թէպէտեւ Լիւինգստոնը գործում էր ոյժից վեր: Այդ երկրորդ ճանապարհորդութիւնումը նա կորցնում է իր կնոջը, որ մեծ վիշտ է պատճառում նրան:

1864 թ. նա նորից վերադառնում է Անգլիա և Հրատարակում՝ „Narrative of an expedition to the Zambesi“:

1865 թ. նա նորից ուղևորվում է Ս.Փրիկա իր երրորդ ճանապարհորդութիւնը կատարելու, բայց այս անգամ և երեւ անգիտական հիւպատոս միջին Ս.Փրիկալի համար, Անգոլայից մինչև Եգիպտոս և Հաբէշտան։ Նա հետազոտում է այն հողերը, որոնք գտնվում են Նիսասա և Տանգանայկալի արևելեան ափին, և մնում է այնտեղ մինչև յուրիսը 1869 թ., երբ գալիս է Ստէնլին։ Ալդ ժամանակ պարզվում է, որ նրա մասին սուտ լուրեր տարածողները նրա մարդիկն էին, որոնք իրանց տիրոջը թողել ու փախել էին և այդ վարմունքը արդարացնելու համար պատմում էին, իբր թէ Լիւինգտոնին բռնել է մի իշխան և սպանել։ Աչա այդպիսի մարդ էր Լիւինգտոնը, որին պատրաստվում էր գտնել Ստէնլին։

Հասնելով Զանգիբեր, Ստէնլին ընտրում է իր կարաւանի համար մարդիկ թւով 192 հոգի և, վերցնելով հետը ճանապարհի զանազան հարկաւոր ապրանքներ, ինչպէս են՝ գոյնզգոյն չթեր, կացիններ, դանակներ, ատրճանակներ և Լիւինգտոնի համար պաշար, ճանապարհ է ընկնում։

Ճանապարհին նրանք ենթարկվում էին վայրենիների յարձակումներին, մրցիւնները անխղճաբար կծոտում էին, փշերը պատուաւմ էին շորերը և չանկուտում մարմինը, միւս կողմից էլ ջերմը և տենդն էին իրանց հունձը անում։ Վերջապէս Ստէնլին գտնում է Լիւինգտոնին Տանգանայկա լճի մօտ։ Տեսնելով նրան, Ստէնլին յուղված վերցնում է գտակը և հարցնում։

— Եթէ չեմ սիսալվում, բժիշկ Լիւինգտոնն էք։

— Ալն, պատասխանում է Լիւինգտոնը, վերցնելով գտակը, և մեկնում է ձեռքքը։

Լիւինգտոնի հետ ունեցած այս խօսակցութեան ժամանակ Ստէնլիին միտք է յղանում իրան էլ նւիրել նոյնպէս Ս.Փրիկալին և պարզել մի քանի մութ հարցեր։

Ինչպէս յետոյ կը տեսնենք, ալդ միտքը նա իրագործում է։ Զանգիբերից գուրս գալով 1871 թ. մարտ ամսին, նա նորից վերադառնում է այնտեղ մայիսին 1872 թ., լինելով ճանապարհին 13 ամիս։ Նրա կարաւանի մարդկանց մեծ մասը մեռնում է, մեռնում են նաև երկու եւրոպացիները։ Ստէնլին կենդանի է մնում միայն շնորհիւ իր առողջ կազմվածքին և հոգու հաստատութեան։ Ալդ ճանապարհորդութիւնը Ստէնլիին բերում է համաշխատհային փառք, բայց միւնոյն ժամանակ մեծ վիշտ էլ է պատճառում, որովհետեւ գտնվում են մարդիկ, որոնք լրբութեամբ յայտնում են, որ նա ստախօս է, ոչ մի ճանապարհորդութիւն չի կատարել և Լիւինգտոնին էլ չի տեսել, իսկ նրանից բերած նամակները կեղծ են համարում։ Բայց ապագան մաքրեց նրան այդ զրպարտութիւններից և ցոյց տվեց, որ նա ընդունակ է աւելի ևս մեծ գործեր կատարել։

Հենց որ Ստէնլին տուն է հասնում, նա ստանում է Լիւինգտոնի մահվան տիրուր լուրը։

Մեծ ճանապարհորդը մեռնում է մայիսի 4-ին 1874 թ. Մուկլալայի մօտ, Բիզում, Տանգանայկա լճից 80 մղոն հեռաւորութեամբ, և նրա հաւատարիմ ծառաները, իրանց կեանքը վտանգի ենթարկելով, նրա մասնաւոր գործնուրում են Զանգիբեր, որտեղից բերում են Հանգիպարագ և Հանգիպարագ արբայտական վանքում թաղում։ *7/ XI - 1922*

*Հանգիպարագ արբայտական վանքում թաղում*  
Լիւինգտոնի ազգեցութեան պատմութեան պատրաստվում էր նորից գնալ Ս.Փրիկա, ալմանդ հետազոտութիւններ կատարելու։

Գլխաւորապէս նա մտադրվել էր գտնել նեղոս գետի սկիզբը, որը այն ժամանակ բոլորին հետաքրքրում էր։

Գրելով «Ինչպէս ես գտայ Լիւինգտոնին» գիրքը, նա պատրաստվում է ճանապարհ ընկնելու։ Ալժմ նրա համար

(533-50/196744-58)

դժվար չեր հարկաւոր գումարը ճարել. „New-York Herald“-ը և „Daily Telegraph“-ը հասցնում են այդ գումարը:

1874 թ. սեպտեմբերի 21-ին Ստէնլին հասնում է Զանգիբար և համարեալ 2 ամսվայ ընթացքում կազմում է կարաւանը, որը բաղկացած է լինում 366 մարդկանցից և երեք եւրոպացիներից, եղբայրք Բարկերներից:

Այս այդպիսի աշագին կարաւանով նա դուրս է գալիս Զանգիբարից և գնում է ուղղակի դէպի Վիկտորիա-Նիասսա լիճը: Այստեղից ուղեռվում է դէպի Տանգանայկա մեծ լիճը: Անցնելով այդ լիճն էլ, նա մտնում է վայրենի մարդակերների երկիրը և, այնտեղ սարսափելի նեզութիւններ կրելով, հասնում է վերջապէս Լուալաբա գետին: Այդ գետը տեսել են շատ ճանապարհորդներ և հաշվում են եղել նեղոս գետի սկիզբը, բայց ոչ մէկին չէ լաջողվել նրան մինչև վերջը հետազօտել, անելանելի դժվարութիւնների պատճառով:

Չը նայած որ հարեան վայրենի ցեղերը զանազան դժվարութիւններ էին առաջ բերում, Ստէնլին վճռում է, ինչ որ էլ լինի, այդ իրան վերին աստիճանի հետաքրքրող գետը հետազօտել: Նրա ճանապարհը մի անլայտ և անվերջ անտառի միջով էր, որը այնքան մեծ երկիւղ էր պատճառում նրա սեւամորթ մարդկանց, որ նրանցից շատերը հրաժարվում են Ստէնլիի հետ գնալուց: Չը նայելով որ այդպիսով էր պետիցիալի թիւը պակասում է, Ստէնլին անվախ մտնում է անտառը և գետի ափով առաջ գնում:

Այդ ճանապարհորդութիւնով նա կատարում է աշխարհագրական մեծ գիւտ: Դուրս է գալիս, որ Լուալաբան ոչ թէ նեղոս գետի սկիզբն է, այլ Կօնգո գետն է, որը մեծութեամբ աշխարհի երկրորդ գետն է համարվում:

Այդ ճանապարհորդութիւնում, բացի Կօնգո գետը գտնելուց, նա հետազօտում է նաև Վիկտորիա-Նիասսա լիճը և գտնում է, որ նա մի լիճ է և ոչ թէ հինգ մասից բաղ-

կացած, ինչպէս առաջ էին կարծում: Նա գտնում է նաև նեղոսի սկիզբը, որը կոչվում է Նեղոս-Աղէքսանդրեան կամ Վագիրա գետ և թափվում է Վիկտորիա-Նիասսա լճի մէջ: Բայց իհարկէ նրա ամենամեծ գիւտը Կօնգո գետը գտնելն է: Կօնգոն կամ Զաիրան, ինչպէս ասացինք, աշխարհիս երկրորդ տեղն է բռնում իր մեծութեամբ: Նրա երկարութիւնը 4<sup>1/2</sup> հազար վերստ է և մի քանի տեղերում նրա լայնութիւնը հասնում է 20 վերստի: Նրա մեծ մասը շոգենաւերի համար անցնելի է և ամեն մի վայրկեանում 50,000 մետր ջուր է թափում Ստլանտեան ովկիանոսը: Գետի ջուրը գեղնագոյն է և հարիւրաւոր վերստեր հեռաւորութեամբ նկատվում է: Նա ջրում է բազմաթիւ տարածութեան հողեր, որի շնորհիւ բուսականութիւնը զարմանալի աստիճանի է հասնում: Այն աշագին տարածութիւնը, որտեղ հօսում է Կօնգո գետը, առաջ հաշվում էին չոր ու ցամաք անապատ, բայց Ստէնլին ցոյց տվեց, որ այդտեղ ոչ թէ անապատ է, այլ հարուստ երկիր անվերջ անտառներով և խիս ազգաբնակութեամբ:

Վերադառնալով Լօնդօն, նա կատարում է իր առաջին պարտականութիւնը՝ տեսնվում է իր մօր հետ և ապա նկարագրում է իր կատարած ճանապարհորդութիւնը: Պէտք է ասած, որ Ստէնլին գրում է զարմանալի արագ և շատ գեղեցիկ նկարագրում է իր տեսածները.

\* \*

Երկար մտածելուց յետոյ, թէ ինչ միջոցով նա վերջ դնի ստրկութեանը Աֆրիկայում և ազատի այնտեղի բազմամարդ ցեղերը վերջնական ջնջումից, նա վճռում է հիմնել մի նեղական տէրութիւն: Այդ նպատակով նա գնում է Բրիտանի և տեսակցում Լէօպոլդ Աթագաւորի հետ: Ստէնլիի արտծ ճանապարհորդութիւնների հիման վրայ Լէօպոլդ թագաւորը ինքն էլ շատ մտածել է, թէ ինչպէս անի, որ այդ հարուստ երկիրները մատչելի դառնան եւրոպացիների համար և

կարելի լինի մտցնել այնտեղ եւրոպական լուսաւորութիւնը ու կուլտուրան: Ահա այս պատճառով նա շատ սիրով է ընդունում Ստէնլիին և խոստանում է իր հովանաւորութիւնը:

Դրանից յետոյ կազմվում է համամարդկալին ընկերութիւն, որի նախագահը ընտրվում է Լէօպոլդ II: Այժմ մնում էր գործը գլուխ բերել: Բայց ով պիտի այդ կատարէր, եթէ ոչ Ստէնլին, ով էր աւելի ծանօթ տեղացիների վարք ու բարքերին և այնտեղի բնութեանը:

Իբրև ընկերութեան հաւատարմատար, Ստէնլին գնում է Կօնգօ, խաղաղացնում է տեղական ցեղերին, մի քանի քաղաքներ է Հիմնում, ճանապարհներ անցկացնում, կամուրջներ շինում, մի խօսքով, սկսում է, իր բնութեան համեմատ, եռանդուն գործը: Հիմնած քաղաքներից մէկին, ի պատիւ Լէօպոլդ թագաւորին, Լէօպոլդվիլ անունն է տալիս:

Այդ աշագին աշխատանքը նրան սաստիկ լոգնեցնում է և նա վերադառնում է Լօնդոն մի քիչ կազմուրվելու: Նրա փոխարէն Լէօպոլդ II ուղարկում է մի գերմանացի: Բայց այդ պարոնը գնում է այնտեղ ոչ թէ գործելու, այլ իր գրպանի հոգը տեսնելու: Իր գլխումը այդպիսի գեղեցիկ նպատակ ունենալով, պարզ է, որ նա կարեւոր գործերը բարձի է թողնում և Ստէնլիի բոլոր աշխատանքը քիչ է մնում որ փչացնի: Ստէնլին թէպէտ Լօնդոնումն էր, բայց աչալուրջ հետեւում էր իր ստեղծած գործին և երբ տեսնում է, որ նա վտանգի մէջ է, իսկոյն վերադառնում է Կօնգօ նոյն 1882 թ: Նորից ամեն ինչ կարգի է բերում, յարաբերութիւնները սւամորթների հետ լաւանում են, մի խօսքով, իր առաջգալ գիրքն է ընդունում: Այդ կրկնակի աշխատանքը նորից նրան լոգնեցնում է և նա վերադառնում է Լօնդոն: Արդէն 15 տարի նա անընդհատ աշխատում էր և հանգստանալը նրա համար անհրաժեշտ էր: Նրան շատ նեղացնում էր իր օգնականների վարմունքը, որոնք գալիս էին այն նպատակով միայն, որ մի

գումար շինեն իրանց համար, իսկ գործի նւիրված մարդիկ նա համարեալ թէ չունէր: Գալով Եւրոպա, նա մի մեծ գերք է հրատարակում Կօնգօի մասին „The Congo and the foundation of its free state“ վերնագրով:

Այդ ժամանակ Բերլինում գումարվում է կօնֆերէնցիա Աֆրիկալի հողերի մասին: Ստէնլին առաջարկութիւն է ստանում ամերիկացւոց տէրութիւնից լինել նրա ներկայացուցիչն այնտեղ: Ստէնլին ընդունում է և կօնֆերէնցիայումը պաշտպանում է նոր հիմնված Կօնգօ տէրութիւնը, որը և ընդունվում է անձեռնմխելի և բէլգիական թագաւորի հովանաւորութեան ներքոյ: Այդ տէրութիւնը ունի մօտ 2.252,780 քառակուսի մղոն տարածութիւն, բայց այդ աշագին տարածութեան միայն մի մասն է, որ իսկական կառավարութեան ներքոյ է, իսկ մնացած մեծ մասը միայն թէօրիալով է պատկանում նրան: Բնութիւնը շատ հարուստ է, բայց կլիման եւրոպացիների համար շատ վատ է, այդ պատճառով նրանց թիւը շատ աննշան է՝ մօտ 950 հոգի, և ամեն մէկը 5 տարուց աւելի չեն կարողանում գիմանալ: Բնակիչների թիւը յայտնի չէ, բայց ենթադրում են ոմանք 14.000,000, ոմանք էլ 19.000,000.

Տէրունական կառավարութիւնը կենտրոնացած է Բրիտանիում և բաղկացած է բէլգիական թագաւորից և երեք միանիստրներից: Տարեկան ծախքը և եկամուտը հաւասար է 7.384,000 ֆրանկի:

1889 թ. օգոստոսի 12-ին Լէօպոլդ II կտակում է Կօնգօն բէլգիական տէրութեան: Յուլիսի 31-ին 1890 թ. հրատարակվում է Կօնգօի հողերի անձեռնմխելութիւնը և թուլատրվում է բէլգիացիներին 10 տարուց յետոյ միայնել այդ երկիրը իրանց կալվածքներին:

Այդպիսով Ստէնլիի աշխատանքը իգուր չէ անցնում և գնալով աճում է, բայց աւելի ևս օգտվում է այդ աշխատանքից:

ինքը, երբ կատարում է իր հռչակաւոր ճանապարհորդութիւնը էմին-փաշալին օգնելու համար, որը և կազմում է այս գրքի գլխաւոր առարկան և որի պատմելուն մենք կանցնենք:

## II.

Նախ քան պատմել Սահնլիի ալս ճանապարհորդութիւնը, մենք պէտք է նկարագրենք այն ժամանակվայ Եղիպատոսի գրութիւնը:

Այդ ժամանակ Եղիպատոսի խեղիւն էր Իզմայիլը: Նա շատ համարձակ էր և ցանկանում էր ամբողջ Սուդանը միացնել իր հողերի հետ: Գալիս էին զանազան մարդկեր և տւելի ևս ծրագիրներ առաջարկում: Եղիպատոսի պարտքը հասել էր 3,200 միլիոն ֆրանկի: Շուտով Իզմայիլին դաշընկեց են անում և նրա տեղը նշանակում Թէֆիկին:

Բայց ահա 1881 թ. մի ոմն Մուհամմէդ Ահմեդ յարտարարում է իրան Մահգի, այսինքն մահմեդականութեան մեսսիա, որը պիտի աշխարհս դարձնէ մահմեդականութեան: Այդպիսի քարոզներով նրան յաջողվում է գրաւել ժողովրդին և մանաւանդ մի քանի յայտարարութիւներով եղիպատական գորքերին, որոնց շուտափում ուղարկում է խեղիւը: Բայց ուրիշ պատշաճներ ևս կալին, որոնք օգնեցին Մահգիի ազգեցութեան տարածելուն:

Սուդացինները անբաւական էին յաճախակի կրկնվող պատերազմներից, որոնք աւելացնում էին առանց այն էլ մեծ հարկերը և, բացի դրանից, ստրուկների առեւտրի դադարեցումից, որը սկսվել էր գեռ Բէկկերի նահանգապետութեան օրից: Ահա գլխաւորապէս այդ պատճառներով Մահգին այդպիսի կարճ միջոցում կարողացաւ այնքան յետևորդներ գտնել: Շուտով նշանակվում է Սուդանի գորքերի հրամանատար Գիքս-փաշան, որը հնդկական գորքերի սպալ էր: Հասնելով

Խարտում, նա կազմում է զօրք, որը բաղկացած է լինում 12,000 մարդկանցից, 10 լեռնային թնդանօթներից, 6 նորդենֆիլդի թնդանօթից, 5500 ուղերից և 500 ձիերից, և առաջ է գնում:

Առաջին երկու պատերազմներում յաղթելով, նա յոյս է գնում իր զօրքի վերալ, բայց չարաչար սխալում է. անհնագանդութիւնը և վախկոտութիւնը լինում են նրա զօրքի կործանման պատճառները:

Մարտի 4-ին 1883 թ. Հանդիպելով մահմետականներին, բոլոր զօրքը փչանում է և ցրվում: Տեսնելով ալգախիսի գրութիւնը, անգլիացիք այլ ևս չէին կամենում զօրք ուղարկել Սուդան, հակառակ Թէֆֆիկ-փաշալի կամքին, որը ամեն ջանք գործ էր գնում Սուդանը պահպանելու: Անգլիան պատասխանեց, որ Սուդանի պատերազմը պիտի տանի Եղիպատոսը իր միջոցներով: Առաջին մինիստր Նէրիֆ-փաշան պատասխանում է, թէ Եղիպատոսի ոյժերը բաւական չեն:

Լորդ Գրինվիլը պնդում է այդ ընդունել և յունվարի 10-ին 1884 թ. մինիստրութիւնը փոխվում է և նշանակվում է Նուբար-փաշան:

1874 թ. մինչև 1876 թ. Վերին Սուդանումը գործում էր Գորդոնը: Յետոյ նա նշանակվեց Սուդանի և Դարֆուրի նահանգապետ: Նրա օգնականներից մէկն էր Էմին-փաշան:

Էմին-փաշան, որի խսկական անունն էր Եգուարդ Շնիտցէր, ծնվել էր 0պէլնում, Պրուսիայում, 1840 թ.: Նա հինգ տարեկան էր, երբ մեռնում է նրա հայրը և նրա գերդաստանը փոխվում է Պրագայի մօտ մի քաղաք, որտեղ ևս ստանում է իր կրթութիւնը: Ապա փոխվում է Բէրուլաւ, այնտեղից Բէրլին, որտեղ սովորում էր բժշկութիւնը, և 24 տարեկան հասակում գիտնականի աստիճանի է հասնում: Լինելով շատ աշխատասէր, նա պարապվում էր ոչ միայն բժշկութիւնով, այլ առհասարակ բոլոր բնական գիտութիւն-

ներով: Բացի դրանից, նա պարապվում էր լեզւաբանութեամբ, որի մէջ ունէր մեծ ընդունակութիւն:

Լսելով 1864 թ., որ տաճկաց կառավարութեանը հարկաւոր են բժիշկներ, նա ընդունում է այդպիսի պաշտօն Անթիւարում: Յետոյ նա մօտենում է Իզմալիլ Հաքքի-փաշափն, որի մօտ մտնում է ծառայութեան, և նրա հետ միասին անցնում է շատ քաղաքներ: Չորս տարի բանդ նստելով, Հաքքին մեռնում է 1873 թ., և այդ բոլոր ժամանկը էմինը նրա յետելից գնում էր և սիրում էր իրան անվանել «Էմին հաւատարիմ»:

Պատմում են, իբր թէ Էմինը Հաքքիի մահից յետոյ ամուսնանում է նրա կնոջ վրայ, բայց դրա մասին հազար ու մի բան են պատմում: Հաքքի-փաշալի մահից յետոյ Էմինը մտնում է եղիպտական ծառայութիւն, որտեղից անցնում է Խարտում, Գորդոնի մօտ, բժշկի պաշտօնով: Այդ ժամանակ է նա ստանում իր ախտղոսը՝ Էմին-էֆֆենդի-Հաքքի:

Գորդոնը իր ուշադրութիւնը դարձնում է Էմինի վրայ և տալիս նրան մի քանի յանձնաբարութիւններ, որ նա կատարում է մեծ յաջողութեամբ և որոնց համար ստանում է բէլի կոչումը:

1879 թ. լսելով Իզմալիլի գահընկեցութիւնը, Գորդոնը յանձնում է կառավարութիւնը Թէֆֆիկին, որովհետեւ Իզմալիլի խորհրդատուններից մէկն էլ ինքն էր:

Ծառայելով այնուշետև Հնդկաստանում, Մաւրիկիա կղզում, Կապլանդում և վերջինի կառավարութեան հետ ըստ Հաշտվելով, վերադառնում է Անգլիա:

Յ տարուց յետոյ նա ստանում է Բէլգիայի թագաւոր Լէօպոլդի առաջարկութիւնը՝ գնալ նորակազմ Կօնգո տէրութեան կէս մասը կառավարելու:

Գարունքին 1884 թ. նա ցանկանում է ճանապարհ ընկնել, բայց այդ ժամանակ Եղիպտոսի դրութիւնը վատ-

թարացել էր և ամենքը աչքները դարձրել էին դէպի Գորդոնը: Նրան համոզում են գնալ Եգիպտոս և գուրս բերել այնտեղից Խարտումի ու Սուդանի զինւորներին ու ծառայողներին, որոնք շրջապատված էին մահմեդականներով:

24-ին յունվարի 1884 թ. նա ճանապարհ ընկաւ դէպի Խարտում, ուր իրան պիտի անմահացնէր: Բոլորեքեանը մեծ յոյսեր էին դըրել նրա վրայ, համոզված լինելով, որ նա կարդարացնի նրանց յոյսերը՝ 229,000 մարդկանց կեանքը կազատի: Խարտումը ազատելը դժվար չէր, բայց ամբողջ Սուդանից ծառայողներին, կանանց և երեխաններին դուրս բերելու համար հարկաւոր էր զօրքը: Իսկ զօրքը ուշացնում էին Անգլիայից ուղարկելու: Փետրվարին նա հեռագրում է. «Քիչ յոյս կայ, որ լաւ լինի, բայց աւելի հաւանական է, որ վատ լինի», իսկ նոյն ամսվայ վերջին. «Մեզ մօտ կայ կենսական մթերք հինգ ամսվայ, թշնամին շրջապատել է չորս կողմից»: Տեսնելով իր քաջ ժեներալի անյուսալի դրութիւնը, անգլիացւոց ազգը պահանջում է զօրք ուղարկել, թէպէտ լորդ Գրենվիլը և Գորդոնը այնպէս էին պայմանաւորվել, որ զօրք չուղարկվի: Գորդոնի սխալը նրանումն էր եղել, որ կարծել էր, թէ փողով և իր անունով նա կը բաւականանայ: Անգլիական կառավարութիւնը, խոնարհվելով ժողովրդի պահանջին, նշանակում է մի էքսպեդիցիա լորդ Ուոլսէլի հրամանատարութեան ներքոյ:

Կոիւներ մղելով, զօրքը հասնում է Խարտումին, բայց դժբաղդաբար ուշ: Յունվարի 27-ին նրանց յայտնում են, որ Խարտումը վերցրած է և Գորդոնը սպանված:

Խարտումը ընկնում է վաճառականների մատնութիւնով: Վեց ժամ է տեսում քաղաքի կոտորածը և 4000 մարդ է սպանվում, իսկ կանանց տանում են 0մդուրման, այնտեղ իրանց մէջ բաժանում:

Բացի Գորդոնից սպանվում են Սանէալ և Նիկոլայ

Հիւպատոսները, յոյն Լէօնդիգօն, կապիտան Ազօրը և ուրիշ բազմաթիւ քրիստոնեաներ: Ամեն մի սպանվածը իսկոյն ալրգում էր կրակի վրայ:

Ալդպիսով ամբողջ Սուդանը ընկնում է մահիւականների ձեռքը, միայն մնում են կենտրոնական նահանգները, որոնց նահանգապետ էր նշանակել Գորդոնը Էմին-փաշալին: Բայց Էմին-ըէլ-Հաքիմի դրութիւնն էլ լաւ չէր. նա շրջապատված էր թշնամիներով: Կտրված լինելով բոլոր աշխարհից, ոչ նրա մասին տեղեկութիւն կար, ոչ էլ նա ունէր տեղեկութիւն Եւրոպայի մասին:

Հասարակաց կարծիքը վրդովված էր Անգլիայում, բոլորեքեանը պահանջում էին օգնութիւն հասցնել Էմինին:

Նամակ նամակի լետերից էր գրում Էմինը և օգնութիւն խնդրում, որովհետեւ կարող էր կրել Գորդոնի վախճանը:

Նա ցանկանում էր իր տեղը մնալ, որտեղ նա 10 տարի անընդհատ աշխատում էր և որը իրան համար դարձել էր երկրորդ հալըենիք: Վերջապէս կազմվում է կոմիտետ, որը պիտի օգնութիւն հասցնէր Էմինին: Հարցը ալժմ ուղղութեան վրայ էր: Ստէնլին, որին նշանակել էին օգնութեան հրամանատար, առաջարկում էր օգտվել Կոնդօ գետից, բայց կոմիտետի անդամները ինչինչ պատճառներով հրաժարվեցին ընդունել այդ և առաջարկում էին գնալ արևելեան կողմանը: Բայց այդ ուղղութիւնն էլ ընդունվեց, որովհետեւ ֆրանսիան հիւպատոսը Լօնդօնում բողոքեց դրա դէմ, պատճառաբանելով, որ Ուգանդում կան բաւական ֆրանսիական միստիօնարներ, որոնց կեանքին երկիւղ է սպառնում այդ ճանապարհորդութիւնից: Մի կողմից գերմանացիներն էին գործում, միւս կողմից եղիպատական գորքը, այնպէս որ, եթէ լուր տարածվէր, թէ հարաւային կողմից մօտենում է բաւական զինւորական ոլժ, ալդտեղի Մգլանդ թագաւորին կը ստիպէր զանազան ծալրայեղութիւնների դիմել: Մինչեւ

այդ վճռվելը, Ստէնլին, համաձայն իր պարտաւորութեան, իմպրէսսարիօն հետ ճանապարհորդում է Սմերիկայում և այնտեղ գասախօսութիւններ կարգում իր արած ճանապարհորդութիւնների մասին: Նա յոյս ունէր գասախօսութիւններով ձեռք բերել մօտ 100,000 ըուբլի: Բայց գասախօսութիւնները ընդհատվում են, երբ 11-ին դեկտեմբերի նա ստանում է կոմիտետի նախագահից հետեւեալ հեռագիրը. «Զեր ծրագիրը և առաջարկութիւնը ընդունված են, իշխանութիւնը համաձայն է, գումարները պատրաստ են, գործը անլետաձգելի է»: Խակոյն Ստէնլին պատասխանում է: «Հեռագիրը ստացավ, շատ շնորհակալ եմ, եթէ լաւ եղանակ լինի և ոչինչ չը խանգարի, դուրս կը գամ „Eider“-ով և Սուլտամպտօնում կը լինեմ դեկտեմբերի 22-ին»:

Փալով Լօնդօն, նա այդտեղից գնում է բէլգիական թագաւորին ներկայանալու, որի փոխարէն Լէօպոլդը խոստանում է Ստէնլիի տրամադրութեան ներքոյ գնել Կոնդօ տէրութեան բոլոր ազատ շոգենաւները:

Հազիւ թէ ձայն է բարձրանում, որ էքսպեդիցիա է կազմվում Էմին-փաշալի օգնութեան համար, երբ ամեն տեղից առաջարկութիւններ են տեղում:

Ստէնլին ընտրում է հետեւեալ անձերին՝ մայօր Էդմունդ Բարտոմէլօտ, լէլտէնանտ Ստէրզ, թնդանօթաձիգ կապիտան Նէլսօն, բժիշկ Պարկէ, բնագէտ Զեմէսօն, միսթր Զեֆսօն և Բօննի: Բայց սրանցից կալին ևս պ. պ. Վարդ և Տրուպ, որոնց պատւիրած էր Կոնդօյում 1500 բեռնակիրներ պատրաստել տեղացիներից:

Յունվարի 20-ին 1887 թ. Ստէնլին ճանապարհ է գնում իր ընկերակիցներին, իսկ ինքը միւս օրն է ճանապարհ ընկնում: Ա.Հազին բազմութիւն էր հաւաքվել քաջ ճանապարհորդին բարի ճանապարհ տաելու:

սուլթանին, Ստէնլին իր գալու օրից չորս օր անցնելուց յետոյ արդէն կարողանում է առաջ գնալ:

Փետրվարի 25-ին 1887 թ. էքսպեդիցիալի անդամներին նստեցնում են «Մագուրա» շոգենաւը, որը և հասցնում է նրանց մարտի 18-ին Կօնգօի ջրերին, Բանանի մօտ:

Հասնելով այդտեղ, Ստէնլին տեսաւ, որ իրան խօստացած շոգենաւները ոչ մի բանի պէտք չեն. մէկի մեքենաներն էին փչացած, միւսը ափումն էր վալր ընկած և ալն: Այդտեղ կային միայն մի երկու փոքր և շատէ կարգին շոգենաւներ, որոնք պատկանում էին տեղական միսսիօնարների ընկերութիւններին: Ստանալով շոգենաւները, Ստէնլին գետով հասնում է Բօմը, ինչպէս նկարագրում է Ստէնլին, գեղեցիկ քաղաք է բազմաթիւ տներով: Հոլլանդացիների, անգլիացիների և ֆրանսիացիների ֆակտորիաները գարդարում էին այդ գեղեցիկ նաւահանգիստը:

Մարտի 21-ին Ստէնլին հասնում է Մատադ և այստեղից չորս օրից յետոյ ճանապարհ է ընկնում գէպի «Ստէնլի-Պուլը»: Բաժանելով մարդկանց 7 մասի, գետի ափով առաջ է գնում: Այդտեղ Ստէրզը փորձ է անում միտրալիեզի վրայ և այնպէս վարժվում է, որ մէկ ըոպէում 300 գնտակ է արձակում:

Այդ բանի վրայ սևամորթները ապշած են մնում և երևի Տիպու-Տիպը փոխում է իր կարծիքը սպիտակամորթների վերաբերմամբ, որոնց մասին նա յարտնել էր, թէ նրանք ամենքը լիմարներ են: Միւս օրը հասնում է Բալաբալային, որտեղ թողնում է 17 հիւանդ, և շարունակում է ճանապարհը: Ստէնլին «Ստէնլի-Պուլը» առաջին անգամը անցնում է 5 ամսում, բայց այժմ, նրա շնորհիւ, կային ճանապարհներ և գիւղեր, որոնք թեթեացնում էին նրա ճանապարհը, ուստի նա անցնում է այժմ միայն մի ամսում:

Արևմտեան ափերի գծով կան ցածր սարեր, որոնց միջով

### III.

Հասնելով Գահիրէ, Ստէնլին ստանում է Նուբար-փաշայից խեղիւի նամակը Եմին-փաշայի վրայ, որտեղ խեղիւը խորհուրդ է տալիս Եմինին վերադառնալ, յայտնելով, որ հակառակ դէպքում նա օգնութեան չը սպասի: Այդտեղից շուտով նա ճանապարհ է ընկնում գէպի Զանզիբար, ուր պէտք է հաւաքվէին էքսպեդիցիալի բոլոր անդամները:

Պատահելով այնտեղ իր հին ծանօթ Տիպո-Տիպին, որը արդէն բաւական ուժեղացել էր, նա աշխատեց նրան գէպի իր կողմը դարձնել:

Ստէնլին հասկանում էր, որ առանց նրա օգնութեան իրան համար շատ գժվար կը լինէր: Տիպո-Տիպը աչք էր դրել Կօնգօ տէրութեան վրայ և նրան իրանից խլած մի կտոր էր հաշվում: Ապա Ստէնլին առաջարկում է Լէօպոլդ թագաւորին նրան նշանակել Ստէնլեան ջրվէժների նաշանգապետ յայտնի ուոճկով: Պայմանում գրված էր, որ Տիպո-Տիպը պիտի տայ 600 բեռնակիրներ, որոնք պիտի բերէին Եմինի հաւաքած փղի ոսկորը, որը պիտի ծախվէր և այդ փողով լրացվէր Եգիպտոսի դատարկ գանձարանը: Նրան իրաւունք էր տրվում տան վրայ ունենալ պետական դրօշակ: Նա պէտք է թողնէր իր ամօթալի գործը՝ գերավաճառութիւնը և դրա հակառակ պահպանէր իր երկրի հպատակներին ամեն մի ասպատակութիւնից: Այդ գործին նա շատ յարմար էր, որովհետև այդպիսի գործերում նա հմուտ էր: Այդ բոլորը կատարելու համար նշանակվում է նոյնպէս մի եւրոպացի գործակատար, որը պիտի հսկէր նրա գործունէութեան վրայ, և պայմանից մի որ և է շեղումն եղած դէպքում նա զրկվում էր իր ուոճկից:

Ենորհիւ անգլիացւոց իշխանութեան և Զանզիբարի

անցնում են զանազան գետեր, բայց դրանցից ամենահրաշալին այն 32 ջրվէժներն են, որոնցից կազմվում է Կօնդօ գետը: Ա.Հա այդ ջրվէժները եղել են Ս.Փրկիկալի խորքերը մտնողների համար չինական պատում: Յ գար քանի-քանի ճանապարհորդները ցանկացել են անցնել, բայց այդ նրանց չի յաջողվել, միայն առաջին բաղդատորը լինում է Ստէնլին, որը և անցնում է, գտնելով այնտեղ կենսատու և առատ հողեր և խիտ ազգաբնակութիւն: Սարերը այդտեղ սանդուխտների ձեւ ունին: Գետը հանդարս հոսում է, բայց յանկարծ կատաղած թափվում է ժայռի վերևից, ահազին փռփռուն ալլիքներ կազմելով, առաջ է հոսում ու հանտարտվում, մինչեւ որ նորից ուրիշ ժայռից աւելի կատաղած վայր թափվի, օդի մէջ միլլիարդ կաթիլներ ցըելով: Այդ սարերի երկարութիւնը 370 վերստ է, իսկ բարձրութիւնը 120 սաժէն ծովի մակերեսովթից: Նրանք ցածրանում են 32 անհաւասար սանդուխտներով, որոնք և կազմում են ջրվէժները:

Անցնելով Լիւֆա գետը, Ստէնլին նկատում է, որ իր մարդիկը սկսում են անհնազանդութեան ցոյցեր անել, բայց մահակի մի քանի հարվածները շուտով նրանց խոնարհեցնում են: Անցնելով զանազան գետեր և վալրենիների գիւղեր, էքսպեդիցիան վերջապէս հասնում է Եամբուլեա: Զանգիբարից մինչեւ Եամբուլեա նա կորցնում է իր մարդկանցից 85 հոգի:

Եամբուլեալից Ստէնլին Տիպպո-Տիպպին և մայօր Բարտուելուին ուղարկում է բեռնակիրների լետելից: Նուտով Բարտուելուը վերադառնում է և լայտնում, որ Տիպպո-Տիպպ 9 օրից լետով կը լինի ալստեղ: Նկատելով հարեան բնակիչների դէպի իրանց ունեցած թշնամական դիրքը, Ստէնլին վճռում է ալստեղ ամրացած բանակ հաստատել, որի գլխաւոր նշանակում է մայօր Բարտուելուտին, իսկ նրան օգնական Զեմէսօնին: Բարտուելուը ալստեղ պիտի սպասէր Բօլորօից

գալիք 31 մարդկանց և լետով, իցէ թէ Տիպպո-Տիպպը ուղարկէր խոստացած բեռնակիրներին, առաջ զնար Ստէնլիին հանդիպելու:

Յունվարի 28-ին 1887 թ. 389 մարդկանցով Ստէնլին թողեց Եամբուլեան և մտաւ անտառը:

#### IV.

Թէպէտ Ստէնլին մի անգամ արդէն անցել էր անտառը, բայց այն անգամ նրա ճանապարհը բոլորովին ուրիշ ուղղութեամբ էր, այնպէս որ իր անցնելի ճանապարհի մասին նա որոշ գաղափար չունէր: Դժվար թէ բաղաքացին կարողանալ երեակայել անտառի մուալլ վեհութիւնը և մանաւանդ այն անտառի, որը պիտի Ստէնլին անցնէր: Երեակայացէք 30 աստիճան տաքութիւն, բազմաթիւ միջատների նեղացնելը, հաւիտենական խաւարը, որովհետեւ անտառի խոտութիւնը թոյլ չի տալիս արեգակի ճառագայթներին ներս թափանցել, վայրենիների թունաւորած նետերը և հազար ու մի տեսակ արգելքներ, որոնք գժվարացնում էին ճանապարհը: Առհասարակ վայրենիները անտառով գնալու ժամանակ սովորութիւն ունին ծուռ ու մուռ գնալ և ալդպիսով մի օրվայ ճանապարհը երեք օրվայ շինել: Ստէնլիին այդ յայտնի էր, ուստի նա չէր որոնում ճանապարհներ, այլ ուղղակի գնում էր, ինքն իրան ճանապարհ բացելով: Առաջուց զնում էին ամենաուժեղները, Սրանցից պահանջվում էր ահազին զգուշութիւն և ճարպիկութիւն: Նրանց տեսողութիւնը և լսողութիւնը վերին աստիճանի լարած պիտի լինէին, որ մի զուցէ լարձակումի չենթարկվեն, և միենոյն ժամանակ պիտի բազուկներով աշխատէին: Մութ, խաւար անտառում առաջ էր գնում «Էմինի օգնութեան կարաւանը», ամեն մի քաղաքոխի համար ստիպված լինելով դանակներով ու

կացիններով ճանապարհ բացել: Ճանապարհին հարիւրամեալ ծառերից պոկում էին կեղեւները, որպէսզի դրանով նշմարելի դարձնեն իրանց անցած ճանապարհը:

Առաջ գնալով գետի ափով, էքսպեդիցիան հասնում է Եակոնդա, սևամորթների գիւղերը: Ալրելով իրանց գիւղերը, նրանք ծուխի յետեից յարձակումն գործեցին էքսպեդիցիալի վրայ:

Բայց հրացանները իրանց գործը տեսան և մի քանի րոպէլից յետոյ նրանք թողեցին ու փախան: Վալրենիների այդ թշնամութիւնը բացատրվում էր նրանց կասկածութեամբ: Նրանք ընդունում էին Ստէնլիի զօրքը այն աւազակալին խմբերի տեղ, որոնք մի տասը ստրուկ վերցնելու համար հարիւրաւոր մարդկի էին կոտորում: Այդ պատճառով ամեն մի գիւղ միշտ ամրապնդած էր:

Գիւղի շուրջը փորած են լինում բազմաթիւ փոսեր և շատ ճարպիկ կերպով ծածկած, այնպէս որ անզգոյց մարդը, ոտը կոխելով, ընկնում է փոսը, որտեղ ցցած են լինում թունաւորած սրածալը փայտեր, որոնք մեծ վնաս էին հասցնում Ստէնլիի մարդկանց: Այդ թոյնի ներգործութիւնը սարսափելի էր:

Համարեալ բոլոր վիրաւորվածները մեռնում էին կամ մնում մշտական կազ: Ստէնլին շատ է աշխատում իմանալ այդ սարսափելի թոյնի պատրաստելու հնարը և միայն մի դեպք բացատրում է նրան այդ: Նրջելով մի անգամ իրճիթներում, նա նկատում է փոքրիկ ծրարներ, որոնց մէջ փաթաթած են լինում կարմիր մըջիւններ: Բանից գուրս է դալիս, որ նրանք այդ մըջիւններին ծեծում են և փոշի դարձնում ու իւղում եռացնում, որից և ստանում են իրանց թոյնը: Մինչև անգամ դրա պատրաստելը գիւղերում արգելված է, այլ ամեն մի ցանկացող պիտի գնայ անտառ ու այնտեղ պատրաստի:

Առհասարակ այդ անտառը հարուստ է միջատներով, որոնցից կարելի է պատրաստել շատ թոյներ:

Այսպէս քայլ առ քայլ էքսպեդիցիան առաջ էր գնում, ունենալով միշտ կտիւներ վայրենիների հետ, և այրած գիւղերը Բարտաշէլոտի համար ուղեցոյների գեր պիտի կատարէին: Ինչքան Ստէնլին աշխատում էր տեղեկութիւններ ունենալ վայրենիներից երկրի մասին, բայց նրա բոլոր աշխատանքը ապարդիւն էր անցնում. նրանք ոչ միայն ոչինչ չեին հաղորդում, այլ միշտ աշխատում էին նրան ճանապարհից շեղել:

Այստեղի թէ բնութիւնը և թէ կենդանաբանութիւնը հակառակ էին Ստէնլիին, իսկ յաճախ կրկնվող անրձեները, որոնք այստեղ տարվայ ընթացքում հարիւր լիսուն օր են տեղում, առաջացնում էին մահաբեր չերմ ու տենդը:

Օգոստոսի 13-ին տեղի է ունենում կռիւ, որտեղ Ստէրզը վտանգաւոր կերպով վերաւորվում է: Բոլոր այդ օրվալ վիրաւորվածները վախճանվում են, բայց Ստէրզից, որին յաջողվում է առողջանալ:

Ճանապարհին նրանց պատահում են գիւղեր, որտեղ յաջողվում է ձեռք բերել բաւական մեծ քանակութեամբ կենսական մթերք, բայց այդ էլ լինում է նրանց վերջին քաղցր յիշողութիւնը:

Մթերք որոնելիս մարդիկ ընկնում էին կամ վայրենիների ձեռքը և կամ թունաւորված ճիպոտներով իրանց վնասում էին:

Պատահէլով մի արաբ ստրկավաճառի, Ստէնլին յանձնում է նրան հիւանդներին և առնում է շատ թանգ գնով ուտելու պաշար:

Ոչ հեռու այն տեղից, ուր Իչուրին և Արուեիմին խառնվում են, Ստէնլին կանգ է առնում, որովհետև մարդիկ այնքան թուլացել էին, որ չեին կարողանում առաջ

գնալ, իսկ ջրով գնալը անհնարին էր բազմաթիւ ջրվէժների պատճառով:

Այստեղ ամուր բանակ շինելով, Ստէնլին ուղարկում է մի գունդ 7—8 մարդկանցից բաղկացած, պատփելով ճարել, ինչպէս էլ որ լինի, պաշար, իսկ ինքը գնում է մի ինչ որ արաբական գիւղ գտնելու, որը, ինչպէս լսել էր, երեք կամ չորս օրվայ ճանապարհի վրայ էր: Առաջվայ գունդը կորցնում է ճանապարհը և միայն երրորդ շաբթումը նրա լետերից ուղարկած մարդկեր գտնում են նրան կիսամեռ թափառելիս անտառումք:

Թողնելով բանակումը հիւանդներին և յանձնելով բանակը կապիտան Նէլսոնին, Ստէնլին առաջ է գնում պաշար ճարելու: Նէլսոնն էլ հիւանդ էր. նրա ոտները խոցոտվել են, այնպէս որ նա չէր կարողանում շարժվել:

Բանակի տեղը շատ անյարմար էր և Ստէնլին խոստանում է վերադառնալ 9 օրից լետոյ:

Հասնելով վերջապէս արաբական գիւղին, մեծ տանջանքով կարելի եղաւ պաշար ձեռք բերել: Արաբները և մանիեմները առել էին մարդկանց հրացանները և նրանց ամեն կերպ նեղացնում էին: Ստէնլին ոչինչ չէր կարող անել իր մարդկանց թուլութեան պատճառով: Ստէնլին յանձնում է Զեֆսոնին 76 մարդկանցով օգնութիւն հասցնել Նէլսոնին, այնպէս որ օգնութիւնը, փոխանակ իններորդ օրը հանելու, հասնում է քսաներորդ օրը:

Այդ ժամանակ Նէլսոնի բանակը սարսափելի նեղութիւններ է կրում: Երկրորդ օրը այն օրից, երբ Ստէնլին դուրս է գալիս, Նէլսոնը հրամայում է նստակը բաց թողնել ջուրը և գնալ աւերս գիւղերը պաշար ճարելու: Նստակը հանելիս Նէլսոնը գտնում է մի ձուկ, որը վայր ընկած է լինում աւագումը, և, անցկացնելով քարթը, բռնում է էլի մի ձուկ, որով և ամբողջ օրը կերակրվում են:

Որերը անցնում էին և մահը իր զոհերը հնձում էր: Երբ որ օգնութիւնը հասնում է, 52 մարդկանցից և 8 փախստականներից կենդանի են մնում միայն 8 հոգի, որոնցից միայն 5 հոգի են համառ բանակը: Ինքը Նէլսոնը կենդանի է մնում շնորհիւ շրջապատողների հոգատարութեան, թէպէտ նա աւելի նման էր ոսկորներով լիքը քսակի:

Սաստիկ քաղցը ստիպում էր Ստէնլիի մարդկանց փոխել հրացանները հայի հետ:

Իմանալով, որ այդ տեսակ դրութիւնը շատ վատ հետեանքներ կարող է ունենալ և որ իրանց նպատակին հասնելու ամենագլխաւոր միջոցը զէնքն է, նա վճռում է դիմել խիստ միջոցների: Չումա անունով մէկին նա հրամայում է կախել, որովհետեւ հրացան էր գողացել, և ապա մարդ է ուղարկում արաբների մօտ, որպէսզի նրանք գնած զէնքերը վերադարձնեն:

Յետ են բերում միայն 55 հրացան: Շուտով արաբների հետ հաշտութիւն է կայանում և այդտեղ նա պայմանաւորվում է գիւղի գլխաւորների հետ, որ նրանք կերակրեն Նէլսոնին և իր ընկերներին: Թողնելով բժիշկ Պարկէին ինամել Նէլսոնին և 295 հիւանդների, Ստէնլին հոկտեմբերի 27-ին գուրս է գալիս բանակից:

## V.

Այսպիս կոտորածները, որ կատարում էին արաբական վաճառականները նեղըների վրայ, այն ժամանակ յուրզում էին ամբողջ աշխարհը: Առաջարկում էին հազար ու մի տեսակ ծրագիրներ, մէկը միւսից ֆանտաստիկական: Իսկ մէկ կարդինալ խաչակրաց արշաւանք էր քարոզում:

Յարձակվելով զիւղի վրայ, արաբները կոտորածից զերծ մնացածներին տանում էին զերի և լափշտակում փղի ոսկո-

ըԸ, որը, ինչպէս յայտնի է, մեծ գին ունի: Այդ ոսկորի (փղի ատամի) ամենափոքրիկ կտորը, արաբ վաճառականի ձեռքը ընկած, երկի անպատճառ ներկված է եղել մարդկացին արիւնի գետերով,—ասում է Ստէնլին, —ամեն մի ֆունտի համար զո՞չվել է տղամարդի, երեխայի կամ կնոջ կեանք: Ամեն մի հինգ ֆունտի համար այրվել է խրճիթ, մի ջուխտ ատամների համար բնաջինջ է եղել մի ամբողջ գիւղ, իսկ մի երկու տասնեակի համար ոչնչացել ամբողջ նահանգը, բոլոր բնակիչներով, գիւղերով և անտառով: Ուղղակի անհաւատալի է, որ 19 դարու վերջումը, մարդկութիւնը այդչափ առաջ գնացած լինելով, նրա համար միայն, որ փղի ոսկորը գործ է ածում միայն գարդարանքի և բիլիարդի գնդակնեների համար, միջին Աֆրիկայի բոլոր հրաշալի երկիրները քարուքանդ անվեխն և ամբողջ ազգաբնակութիւնը, ցեղերը և ժողովուրդը փչանային և ցրվեխն աշխարհի երեսից: Արդեօք բիլիարդ խաղացողները կամ փափկասուն տիկնալք, ոսկորի կոթով հովանոցները ձեռներին, երբ և իցէ մտածել են, թէ ինչքան արիւն է թափված դրա համար, ինչքան բարբարոսութիւններ է գործված, ինչքան արտասուք է թափված այդ կտոր ոսկորների համար:

Բայց այն կոտորվածները աւելի բաղդաւոր էին կենդանի մնացածներից: Ձեռքերը ձեռքերից կապկապած, նրանք շաբթներով, արաբական մտրակի տակ, առաջ պիտի գնային առանց ոչ մի յուսուլ հանգստութեան, օգնութեան կամ կարեկութեան վրայ...

Այդ սարսափների առաջը առնելու համար Ստէնլին առաջարկում էր, որ բոլոր եւրոպական տէրութիւնները, որոնք կալվածքներ ունին Աֆրիկայում, բաց թողնեն պատերազմական մթերքը որոշ քանակութեամբ և խստիւ արգելեն դրանց վաճառումը արաբ վաճառականներին: Այն ժամանակ նրանք ստիպված կը լինին քաշվել գէպի ծովեզը, որովհետեւ

եւրոպական զէնքերն են, որ ոյժ են տալիս նրանց յարձակումներ գործելու բազմամարդ նեգրական գիւղերի վրայ և կատարելու իրանց եղեռնագործութիւնները:

Անտառով գնալիս էքսպեդիցիան նորից սկսեց տանջանքներ կրել, մանաւանդ թզուկների կողմից: Այդ փոքրիկ մարդիկը շատ մեծ հրէշներ դուրս եկան: Էքսպեդիցիայի մարդկանց շատերը կոտորվեցին դրանց թունաւորած նետերից և միայն զանգիբարցիների հրացանները մնացածներին ազատեցին:

Միանալով իբուիրիում Զեփոսնի հետ, որը գնացել էր Նէլսոնին օգնելու, էքսպեդիցիան առաջ է գնում: Նորից սկսում են տանջանքները իրանց բոլոր փորձանքներով, էլի մարդ ամեն մի քայլը պիտի բնութիւնից առնէր դանակով և կացնով:

## VI.

Վերջապէս ամսի 30-ին նրանք նկատում են մէկ բարձրութիւնից, որ անտառը վերջանում է: Իէպի հիւսիս-արևելեան կողմը նա շարունակում էր, իսկ արևելեան կողմում նա բաց էր, և գիտողի աչքին բացվում էր հիանալի տեսարան. անվերջ դաշտեր, կանաչ խոտով զարդարած, որոնց միջով հոսում էին գետակներ: Բոլորեքեանը աշխատում էին հասնել այն բարձրութեանը, որտեղից տեսել էին առաջին անգամ դաշտերը, և չէին կարողանում կշտանալ ալդ տեսարանից:

Դեկտեմբերի 5-ին էքսպեդիցիան դուրս է գալիս անտառից, որտեղ հարիւր վաթսուն օր խաւարումը տանջվում էր: Սևամորթներից շատերը յետ էին գառնում և հայշոյում անտառը, որը նրանցից այնքան զոհեր էր կանել, որը պատճառ էր եղել նրանց կրած նեղութիւններին ու տանջանքներին: Բայց դարաւոր անտառը լուր ու մունջ կանգնած էր իր մռայլ վեհութեան մէջ:

Արձակում էին հրացանները, պարում և ամեն տեսակ արտայալտում իրանց ուրախութիւնը: Այդ զուարձութիւնից նրանք շատ ժամանակ զրկված էին եղել:

Շուտով նրանք հասնում են մի նաշանգի, որը Մազամբօնի իշխանութեան ներքոյ էր: Այդտեղի բնակիչները նրանց ընդունում են թշնամաբար. սկսում են գոռալ, թէ փայտերով կը փախցնեն նրանց, և որովհետև երկար մտածել չէին սիրում, անմիջապէս խօսքից անցնում էին դէպի գործը ու սկսում անհամար նետեր թափել էքսպեդիցիալի գլխին:

Նկատելով, որ վայրենիները հաւաքվում են մեծ քանակութեամբ յարձակումն գործելու, և իմանալով, որ դրանց միայն ոյժով կարելի է համոզեցնել, որ հաշտութիւնը կուից լաւ է, իսկ գլխաւորապէս իր պրէստիժը պահպանելու համար, Ստէնլին հրամայում է պատրաստվել ընդունել նրանց ինչպէս հարկն է, բայց նախօրոք մարդիկ է ուղարկում ընծաներով, որ մի կերպ հաշտութիւն կայացնեն: Ուղարկվածները լետ են դառնում և յալտնում են, որ այդ հողը Մազամբօնինը չէ, այլ Բաբա-Թեգինը, որը և հրամայում է նրանց քշել իր հողից: Շուտով գործողութիւնները սկսվում են, և մի քանի ժամվայ ընթացքում սեամորթները ցիրուցան են լինում և ստիպված են լինում հաշտութիւն կայացնել: Բայց չը նայած կապած հաշտութեանը, նրանք փորձում էին նորից յարձակումներ գործել, մինչև որ գնդակները նրանց չէին հանգստացնում, թէպէտ նրանք չէին կարող երևակայել, թէ ինչպէս կարելի է այսպիսի մեծ տարածութեան վրայ մարդու վնաս հասցնել: Զը նայած իրանց մարդկանց մեծ քանակութեանը, մազամբօնիք միշտ պարտութիւն էին կրում:

Թողնելով այդ կովարար տեղը, Ստէնլին շարունակում է իր ճանապարհը: Մի 15 րոպէ չանցած, յանկարծ լսվում է Ստէնլիի ձալնը: «Պատրաստվեցէք տեսնել նիանսան»: Մար-

դիկ չէին հաւատում և տրտնջում էին: Մէկ ու կէս ժամին նրանք արդէն տեսնում են ներքեռում Ալբերտ-Նիանսա լիճը: Տեսնելով այդ, սեամորթները սկսեցին համբուրել Ստէնլիի ձեռները, որ ներէ իրանց թերահաւատութիւնը: Այդ ժամանակ նրանք ծովի մակերեսովից 1500' (ոտնաչափ) բարձրութեան վրայ էին, իսկ Ալբերտ լիճը 2900' նրանից ցածր էր: Նրանք պէտք է շուտով թողնէին իրանց տեղը, որովհետև յարձակումները գեռ ևս շարունակվում էին: Մի գիշեր, հանգստանալու ժամանակ, նորից փորձեցին յարձակվել, բայց, շնորհիւ պահապաններին, այդ նրանց չը յաղողվեց:

Մօտենալով Ալբերտ լճին, Ստէնլին տեսնում է Կակօնգօ գիւղը, որի բնակիչները ցանկութիւն չեն ցոյց տալիս նրա հետ յարաբերութիւններ հաստատելու: Ստէնլին յուս ունէր ալդտեղ էմինի մասին մի տեղեկութիւն ստանալ և գտնել այստեղ նաւակներ: Նրան միայն հաղորդում են, որ Ունիերոպում մի սպիտակ մարդ կայ: Երջակայքում էլ մի բաւական հաստ ծառ չը կար, որից կարելի լինէր նաւակ շինել: Տեսնելով անելանելի գրութիւնը, Ստէնլին վճռում է վերագառնալ Իբուիրի, շինել այնտեղ մի ամրոց և ալդտեղից մարդիկ ուղարկել Իպօտո նաւակի լետեկից, ապա, թողնելով բերգում հիւանդներին և զօրք, ինքը վերցնէ նաւակը ու Ալբերտի հիւսիսալին ափերում փնդուէ էմինին: Հասնելով Իբուիրի, նրանք անցնում են Բօրիօ գիւղը, բայց այն բոլոր պաշարները, որ նրանք տեսել էին, այլևս չը կալին: Սեամորթները հաւաքել էին բոլոր ուտելեղէնները, իսկ իրձիթները ալրել: Բարեբազարար լաւ գերանները նրանք թագցրել էին: Իսկուն հաւաքում են այդ գերանները և մի ամրութիւն շինում, որին տալիս են «Բօգօ» անունը, այսինքն «խաղաղութիւն»: Իրանց սովից զերծ պահելու համար բաւականաչափ հողեր վարել էին զանազան հացահատիկներով: Շուտով գալիս է Ստէնլիը, որին Ստէնլին Իպօտո էր ուղարկել,

բերելով իր հետ նաւակը: Եկան նոյնպէս նէլսօնը և բժիշկ Պէրկը: Խալօտում թողած երեսուն և երկու հիւանդներից մնացել էին միայն տասն և մէկ հոգի, մնացեալները կամ մեռել էին, կամ փախել:

Զը հանդիպելով Բարտտէլօտին, Ստէնլին նրան մի նամակ է գրում և առաջարկում է ցանկացողներին դուրս գալ նամակը նրան հասցնելու: Միւս օրը քսան հոգի պատրաստվում են առաջ գնալու: Ամեն մէկին խոստացած էր հարիւր ըուբլի: Նրանց ճանապարհ գցելու դուրս է գալիս Ստէրզը:

Թողնելով նոր շինված բերդում նէլսօնին և կառավարութիւնը յանձնելով նրան, Ստէնլին, որը այդ ժամանակ տեղով էր հիւանդացել, բժիշկ Պէրկի և Զեֆսօնի հետ առաջ է գնում: Ստէնլիին տանում էին պատգարակում, որովհետեւ ոտով չէր կարողանում գնալ, և երկու շաբթում հազիւ հասնում են Ալբերտին: Նրանք առաջ էին գնում կամաց-կամաց, որովհետեւ պողպատէ նաւակը տանելը կարող էր ուժասպառ անել բեռնակիրներին: Ճանապարհին նրանք տեսնում են թզուկներին և մինչև անգամ նրանց թագուհուն: Այդ փոքրիկ թագուհին ունէր վզին և ականջներին երկաթէ զարդարանք, մորթն դեղնագոյն էր, երեսը կոլոր, լայն մեծ աչքեր, փոքրիկ բերան և հաստ շրթունքներ: Մի խօսքով, նա թողնում էր լաւ տպաւորութիւնն: Նրա բարձրութիւնը չորս ֆուտ և չորս դիւմ էր, թէպէտ տարիքը 19 կամ 20 էր: Երբ որ ձեռները պահում էր դէպի լոյսը, նկատվում էին սպիտակ-մոխրագոյն բրդի նման մազեր: Թզուկները, Ստէնլիի ասելով, շատ անհանդիստ և արիւնաբրու մարդիկ են: Իրանց թունաւորած նետերով նրանք շատ էին նեղացնում: Բօդում ստիպված էին միշտ 10—20 մարդկանցից բաղկացած մի գունդ ուղարկել շրջելու, որ դրանք կենսական մթերքներից չը գողանան:

Եքսպերիյիան ամեն մի քալափոխում պատահում էր

նենգաւոր թզուկների թունաւորած սրածալը ճիպոտներին, որ նրանք ամեն մի գերանի յետևում շարում էին, բայց այդ խորամանկութեանը արդէն սովորել էին: Անցնելով մի քանի գիւղեր, նրանք վեց օրից յետով հասնում են Պիսգա սարի մօտ, որտեղ մի խումբ զինուրներ նետեր են տեղում, բայց հրացանների պարագումը նրանց փախցնում է:

Անցնելով Դտուրի գետը, 3<sup>1/2</sup> ժամից յետով նրանք հասնում են անտառի վերջը: Բժիշկ Պարկէն, Ստէնլիի ասելով, ուրախութիւնից դողում է, և ոչ մի շամպայն նրա թշերը այնպէս չէին կարմրացնիլ, ինչպէս 289 օր անտառում մնալուց յետով ազատվելը: Մի քիչ անցնելուց յետով բանակ են ձգում Բէսսէ գիւղում:

Ստէնլին օրինակ է բերում սեամորթների սրախօսութիւններից:

Զանզիբարցիներից մէկը հայհոյում է միւսին.

—Այդպիսի լիմար, ինչպէս դու ես, դեռ ոչ մի տեղ չէ տեսնված:

Տեղացին ժպիտով պատասխանում է.

—Յալտնի է, պարո՞ն, որ դու ես միակ իշխողը բոլոր դիտութիւնների:

—Ն, դու ինքը չարութիւնն ես ներկայացնում:

—Դրա մասին էլ չեմ կարող վիճել, որովհետեւ դու ես բոլոր բարութիւնը:

Սուածին որոշ տեղեկութիւնը Եմին-փաշալի մասին Ստէնլին ստանում է Նզերա-Կումում, որտեղ կանգ է առնում: Այդ այն տեղն էր, որտեղ նա չորս ամիս առաջ Մազամբօնիի հետ կոիւներ էր մզում:

Մազամբօնիք, տեսնելով, որ իրանց ձեռնատու է հաշտութիւնը, մանաւանդ, որ էքսպեդիցիան դէպի նրանց ոչ մի թշնամութիւն չէր անում, շատ լաւ են ընդունում: Փայտ կոտորելը, ապրանք կրելը և ամեն մի գործ նրանք ուրա-

խութեամբ էին կատարում: Սէրը այն տեղն է հասնում, որ մինչև անգամ Զեֆսօնը նրանց հետ եղբարանում է: Եղբարանալը կայանում է նրանում, որ երկու կողմից էլ ձեռները ծակում են ու արիւնները խառնում: Այդ ժամանակ կախարդը սկսում է մի ամբողջ անէծքի լէքսիկոն կարդալ անհաւատարիմի գլխին: «Թող նրա փորը, երեսը այլանդակվի, թող նրա մազերը թափվեն, թող օձը և առիւծը նրան հանդիպեն և վագրը նրա կնոջը տանի գիշերը, երբ նա գնալու լինի ջրի», և այն, և բոլորը այդ ոգով:

Այստեղ Ստէնլիին յայտնում են, որ, երբ նրանք վերադառնում էին, մի սպիտակ «Մալիջու» կամ «Մորուքաւոր» մի ինչ որ սե փայտի վրայ լողում էր: Այստեղ բաւական մարդիկ և անասուններ կային, այնպէս, ինչպէս մերարտերումը: Այդ նաւակից ծուխ ու կրակ էր դուրս գալիս, ասես թէ ալրվում էր:

Այստեղ Ստէնլին մեղադրում է փաշալին, որ նա առաջվանից չէր ուղարկել նաւակները, որոնց սպատճառով նա կորցնում է չորս ամիս:

Վալրենիների մեծ մասը հաստատ բնակութեան տեղ չունի, նրանց մեծ մասը թափառական է. պարապվում են անասնապահութեամբ և երկրագործութեամբ: Դրամի տեղ գործ են ածում հուլունքներ, կարմիր չիթ, իսկ ամենատարածվածը գոմեշն է: Ով որ շատ գոմեշ ունի, նա ամենահարուստն է: Մորթի գոյնը գեղնագոյն է, մութ մոխրագոյն, իսկ արիստոկրատ ցեղերինը փղի գեղնած ոսկորի գոյն ունի: Քթերը լայն են և տաթակ, ներքեւի պաօքը հաստ և կախ, ճակատը նեղ և մազերը կոշտ:

Հետաքրքիր է այն ներգործութիւնը, որ արել էր վալրենիների վրա հայելին: Երբ որ տեսնում էին իրանց սեղնչերը, իսկոյն փախչում էին և յարձակողական գերքում կանգնում: «Հրաշալի բան է, — ասում էին նրանք, — ջրի նման է,

բայց ամուր ու յետեր սե. այդպիսի բան մեր պապերն էլ տեսած չեն լինիլ»: Նուտով ընդելանում են այդ անսովոր բանին և հետաքրքրութեամբ նայում: Առաջգայ թշնամիները այժմ մօտ բարեկամներ էին դարձել, և 300 հոգի ինքնակամ դուրս են գալիս ապրանքի մի մասը կրելու:

## VII.

Ստէնլիի Բօդօ գնալսց երկու ամիս անցած էմինը լսում է մի ինչ որ սպիտակ մարդկանց գալստեան մասին և անմիջապէս ուղերդվում է այնտեղ ու մի քանի նամակ թողնում Կաւալի տանուտէրի մօտ: Լսելով այդ նամակի մասին, Ստէնլին ուղերդվում է այնտեղ և ստանում է նամակը: Բացի գրանից, Կաւալին սիրազօժար ցոյց է տալիս լարմար տեղ բանակ ձգելու:

Միւս օրը այդ նամակը ստանալուց յետոյ Ստէնլին ուղարկում է Զեֆսօնին և բժիշկ Պարկէին 50 հրացանով, որ պողպատի նաւակը հասցնեն լիճը, և մի նամակ է գրում էմինի վրայ, որտեղ յայտնում է իր գալու նպատակը, խորհուրդ է տալիս դուրս գալ այնտեղից, մանաւանդ որ եգիպտական կառավարութիւնը յայտնում է, որ այլ ևս օգնութիւն չի կարող անել, և այն օրվանից, երբ պատերազմական մթերքները կը ստանայ, նա արդէն ծառայութեան մէջ չի լիշվիլ: Պատմելով իր առաջին և երկրորդ գալը, յայտնում է, որ «բէլի» փոխարէն նա «փաշալի» տիտղոս է ստանում, և խնդրում է, որ գալու ժամանակ հետը ցորեն և անասուններ բերէ:

Ամսի 26-ին Զեֆսօնը հասնում է Լիսվայ, եգիպտական գորքերի ամենահարաւային կէտը, որտեղ նա գտնում է ամենասիրալիր ընդունելութիւն: Այստեղ նա հանդիպում է էմին-փաշալին և կապիտան Կազատիին: Այդ տեսութիւնից

երեք օր անցած երեքն էլ գնում են դէպի Կաւալլի Ստէնլի-ին տեսնելու:

Ապրիլի 29-ին Ստէնլին ստանում է Զեփսօնից նամակ, որի մէջ նա յալտնում է, որ Հասել է ողջ և առողջ փաշալի բերդերից մէկին:

Նոյն օրը, ժամը 5-ին, Ստէնլին տեսնում է լճի վրայ մի կէտ, որի մէջ հեռադիտակով նշմարում է շոգենաւ և լետե-ից երկու նաւակ: Նա ուղարկում է Պարկէին զինորներով ափը փաշալին հանդիպելու:

Մութ գիշեր էր, այնպէս որ շոգենաւի տեղը որոշում էին նրա կրակներովը: Շուտով «Խեդիւ» շոգենաւը ափի մօտ խարիսխ է ձգում և մի նաւակ Եմին-փաշալին, Կազատիին և Զեփսօնին դուրս է բերում ափը: Այստեղ բարձրածայն գո-ռում-գոչիւններում Պարկէն ընդունում է նրանց: Մի քիչ բարձրանալով վերև, նրանք մտնում են Ստէնլիի բանակը և մի քանի րոպէից լետոյ երկու հերոսները սեղմում են իրար ձեռ-քանի բոպէից լետոյ երկու հերոսները սեղմում են իրար ձեռ-քանի բոպէից լետոյ երկու հերոսները: Ստէնլին զգացված ողջունում էր փաշալին, որը նոյն-պէս զգացված շնորհակալութիւն էր անում իր Համար կրած նեղութիւնների համար:

Այդ ժամանակ բանակում ընդհանուր ուրախութիւն էր տիրում. արձակում էին հրացաններ, կանաք և տղամարդիկ գոռում էին, իսկ մի քանի տեղ տեղական երաժիշտները նուագում էին իրանց անսովոր եղանակները:

Ստէնլին երեակայել էր հանդիպել մի բարձրահասակ քաջարի դէմքով տղամարդի, իսկ նրա առաջը դուրս եկաւ մի կարձաշասակ և նիշար, ակնոցներով, ֆէսը գլխին մարդ:

—Ես ձեզ պարտական եմ անվերջ շնորհակալութեամք, միսթը Ստէնլի, միանգամայն խօսք չեմ գտնում արտայա-տելու իմ շնորհակալութիւնս:

Ահա, ուրեմն, այդ դուք էք Եմին-փաշալն: Խնդրեմ, շնորհակալութիւն մի արեք, այլ մտէք ու նստեցէք: Այստեղ

այնպէս մութ է, որ մենք միմեանց տեսնել էլ չենք կարո-ղանում:

Նստելով վրանի դրան մօտ, նրանք սկսում են խօ-սակցութիւնը զանազան անցքերի մասին և այդ դէպքի համար բաց են անում հինգ շիշ շամպայն ու Եմին-փաշալի և Կազատիի կենացները խմում: Երեկոյեան ճաշից լետոյ նրանք նստում են նաւակը, որը Հասցնում է նրանց շոգենաւը:

Միւս օրը Ստէնլին տանում է բանակը նսաբէ գիւղը, որը 30 սաժէն հեռաւորութեան վրայ էր լճից, և այդտեղ շինում են ամրացրած բանակ, որտեղ բնակվում են 29 օր:

Յանձնելով փաշալին 31 արկդ Ռեմինգտոնի զանազան պատերազմական մթերքներ, բոլոր նամակները, խեգիւի Փիր-մանը և Նուրբար-փաշալի դէպէշը, Ստէնլին սկսում է բա-ցատրել այն պատճառները, որոնց հիման վրայ եգիպտական կառավարութիւնը հրաժարվում է նրան օգնութիւն հաս-ցնելուց: Ստէնլին կարծում էր, որ այստեղ իր օգնութիւնից կաշխատեն շուտով օգտվել ու դուրս գալ այս երկրից, բայց երեակայեցէք նրա զարմանքը, երբ նա գտաւ այստեղ իրանց երկրից գոհ մարդկանց, որոնց պէտք էր գեռ երկար համոգել, բացատրել նրանց վտանգաւոր գրութիւնը, որ նրանք թող-նեն ու շուտով հեռանան:

Տեսնելով փաշալի տատանվիլը, Ստէնլին ասում է.

—Բժիշկ Իւնկերը յալտնեց ամբողջ աշխարհին, որ դուք շատ նեղ դրութեան մէջ էք, որ բոլոր կողմից շրջապատ-ված էք թշնամիներով, թէպէտ դուք սիրում էք այստեղի հողը և ժողովուրդը: Նա ասաց, որ ձեզ հարկաւոր է օգնու-թիւն, որ դուք, ինչպէս պաշտպանել էք, ալժմ էլ կը շա-րունակէք պաշտպանել, մինչեւ ձեզ կառավարութիւնը ուրիշ հրամաններ չը տալ: Ահա, այդ ի նկատի ունենալով, խե-գիւը ուղարկում է ձեզ օգնութիւն և առաջարկում է, որ դուք այստեղից դուրս գնաք եգիպտոս, և ինձ էլ յանձնված

Է ձեզ պատերազմական մթերքներ տալ և ասել. «ահա մենք պատրաստ ենք ձեզ օգնելու, եթէ ցանկանում էք դուրս գալ այստեղից, ապա թէ ոչ մեր յանձնարարութիւնը վերջացած է»։ Յետոյ Ստէնլին բացատրում է պատճառները, որոնց հիման վրայ էմինը պիտի դուրս գալ:

—Դուք գեռ ջաշել էք, —շարունակում է Ստէնլին, — գեռ քառասուն և ութը տարեկան էք. դիցուք թէ դուք կարողանաք կառավարել 5, 10, 15 տարի, իսկ յետոյ կը սկսէք թուլանալ, ձեր ոլժերը կընկնեն, ձեր մարդիկը իրար կը կոտորեն գլխաւորութեան համար և բոլոր ձեր աշխատանքը ապարդիւն կանցնի։ Այն ժամանակ գուցէ դուք ցանկանաք յետ գառնալ, կը հասնէք ծովի ափը, իսկ այդտեղ ով կօգնի ձեզ այդքան բազմութիւնը տուն հասցնելու, իսկ երբ Եգիպտոսի օգնութիւնը դուք մերժում էք, յետոյ այդ այլ ևս չի լինի։ Եթէ դուք լինէիք ծովի եզերքին, որտեղ կարելի կը լինէր ձեզ օգնել, ես ինքս կօգնէի։ Բայց այստեղ դուք չորս կողմից շրջապատված էք զանազան հզօր ցեղերով, ձերարևմտեան կողմում անվերջ անտառներ են, իսկ հիւսիսում՝ Փանատիկոս մահքականները։ Եթէ ես ձեր տեղը լինէի, ոչ մի վայրկեան չէի մտածիլ։

—Ինչ որ ասացիք, շատ ճիշտ է, ասաց էմինը, բայց ի նկատի ունեցէք, թէ ինչքան բեռնակիրներ են մեզ հարկաւոր, որ տանեն կանանց և երեխաներին։ չէ՞ որ նրանց չի կարելի այստեղ թողնել, և բնչքան մթերք է հարկաւոր դրանց համար։

—Կանալք, իհարկէ, պիտի գնան ինչպէս և միւսները, իսկ երեխաների համար կարելի է պատրաստել ձեր էշերը։ Առաջ կը գնանք կամաց, իսկ յետոյ կը սովորեն։ Կերակրվելու համար բաւական են ձեր անասունները մինչեւ այն երկիրները, ուր կարելի կը լինի ուտելեղէն գնել։ Դատ դժվար էր էմին համար թողնել այն երկիրը, որ

տեղ նա 11 տարի արիւնքրտինք էր թափել, որտեղ նա այնքան տարի մարտնչում էր թշնամիների դէմ, որտեղ նա էր առաջին անգամը սկսել ցանել լուսաւորութեան սերմերը և որտեղ, վերջապէս, երևում էին նրա աշխատանքի պտուղները։

Ստէնլին շատ լաւ էր հասկանում այդ և ամեն ջանք գործ էր գնում հաստատելու այն բոլոր վտանգը, որին նա ենթարկում էր թէ իրան և թէ իր հպատակներին։

Յետոյ Ստէնլին հարցնում է կապիտան Կազատիի կարծիքը։

Վերջինս պատասխանում է, որ եթէ փաշան գնալ, ինքն էլ կը գնալ, իսկ եթէ մնալ, նա էլ կը մնալ։

Երբ որ ձայն է տարածվում էքսպեդիցիալի մասին ու յայտնվում է, որ հազարաւոր զինված մարդիկ օգնութեան են դալիս փաշալին, որպէսզի նրա հետ անցնեն Ունիօրան և Ուգանդան, հողերի իշխան Կաբա-Թեգգան մարդիկ է ուղարկում Կազատիի վրայ, որոնք բոլոր եղածը թալանում են և նրան ծառաների հետ միասին ծառերից կապելով, անխնայ ծեծում են, մէկ արաբի էլ քիչ էր մնացել որ մահվան պատմի ենթարկէին, կարծելով, որ նա մատնիչ և լրտես է, որովհետեւ նա միջնորդի գեր էր կատարել Կազատիի և միսիոնարների մէջ։ Դուրս բերելով Կազատիին և նրա մարդկանց նրանց հոգից, բոլորին մերկացրած կապում են թոկերով ծառերից, բայց սրանց շուտով յաջողվում է կտրտել թոկերը և փախչել։ Հասնելով լճին, նրանք գտնում են այդտեղ մի նաւոկ, որի մէջ նստելով, լողում են դէպի արևմտեան կողմը։ Նրանց նկատում է նաւերից մէկը, որը գնում է ու յայտնում էմինին։ Իսկոյն փաշան նստում է զինուորներով «Խեգիւ» նաւը և ինքը անձամբ գնում է ու ազտառում։ Ապա, վրէժը առնելու համար, մարդիկ է ուղարկում, որոնք այրում են Կիբերօ գիւղը։ Այդ միջոցին Կազատին կորցնում է իր բոլոր օրագիրները, նամակները և թղթերը։

Կաբբա-Թեղան Էմինի Հարևան թագաւորներից մինն  
էր, որը յատնել էր նրան պատերազմ:

Ունենալով 1500 զինուոր, նա իրան բաւական ուժեղ  
էր զգում յարձակումներ գործելու:

### VIII.

Մի քանի օրեց յետոյ փաշալի և Ստէնլիի մէջ խօսակ-  
ցութիւնը նորից կրկնվում է. նրանք վճռում են, որ Ստէն-  
լին մի նամակ կը գրի և կուղարկի Էմինի զօրքին, որ նա  
իրանց հետեւ: Էմինը գիտէր, որ իր զօրքի կանոնաւոր մա-  
սը չէր ցանկանում վերադառնալ, որովհետև նրանք իրանց  
ապահովել էին և ամեն ինչը շատ էր, իսկ այդքանը Եգիպ-  
տոսում նրանք գտնել չէին կարող: Մնացած անկանոն  
զօրքը պատրաստ էր գնալու, բայց փաշալի խղճմտանքը  
թող չէր տալիս մէկ մասը թողնել այստեղ, շատ լաւ իմա-  
նալով, որ միայն իր հեղինակութեան շնորհիւ նրանք  
խաղաղ էին պահում իրանց, իսկ իր գնալուց յետոյ գլխաւո-  
րութեան համար միմեանց կը կոտորէին:

Գրելով իր գոչումը դէպի զօրքը, Ստէնլին, բացի մի  
քանի մարդկանցից, թողնում է Ձեֆսոնին, որ նա լինի եր-  
րեւ տէրութեան ներկայացուցչից ուղարկված, և 24-ին մա-  
յիսի 1888 թ. գնում է Բարտուէլոտին ազատելու:

Մօտ մի տարի առաջ նա թողնում է մայօր Բարտու-  
էլոտին և մինչեւ այժմս ոչ մի լուր չէ լսվում նրա մասին: Ստէնլիին շատ էր անհանգստացնում նրա ուշանալը. նա  
ենթագրում էր, որ երեսի լուրջ պատճառներ են ստիլել  
Բարտուէլոտին չը գալ օգնութեան, ուստի վճռում է ան-  
պատճառ հասնել մայօրի մօտ:

Ճանապարհին նրան յայտնում են, որ Գագոնգօն և  
Մուզիրին երկու բարեկամ և կովասէր ցեղապետներ, զօրք

են հաւաքում նրա վրայ յարձակվելու, գլխաւորապէս նրա  
համար, որ նա բարեկամացել էր իրանց հակառակորդ Մա-  
զամբօնիի հետ: Տեսնելով, որ Բօդօն հեռու է և դրանց դէմ  
կովելը շատ դժվար կը լինի, Ստէնլին վճռում է դրանց  
ջախջախել առանձին-առանձին:

Շուտով նրանք տեսնում են կարմիր դրօշակ և կար-  
ծում են, որ դա թշնամի է, բայց երեսում է Մազամբօնիի  
եղբայր Կոտաօն, որը եկել էր Ստէնլիին ընդառաջ:

Ստէնլին ուղարկում է մի գունդ նախ Գագոնգօի դէմ  
և նրանց փախցնում: Իսկ երբ մօտենում է Մուզիրիին,  
վերջինս, իմանալով իր գաշնակցի պարտութիւնը, թողնում  
է ու փախչում:

Այդ թեթև յաղթութիւնից Մազամբօնիի զինուորները  
վճռում են օգտվել: Դրանց մօտ սովորութիւն կայ ամեն  
յաղթութիւնը տօնել երգերով, պարերով ու Լուկուլեան  
ճաշով:

Այդ պարը հետեւալումն է կայանում:

Թմբուկների հարվածների տակտի հետ նրանք ծոմռոտ-  
վում, կոտրատվելով թուշկոտում են, անպէս որ շարժում են  
գիտողների ծիծաղը: Նզթայ են կապում երգողներից և,  
երկու հոգի գուս գալով, դուեթներ են երգում: Նատ ան-  
գամ գուրս է գալիս մէկը, զարդարած լինելով զանազան  
փետուրներով, քարերով լիքը դատարկ դդումներով, մարդու-  
ու կոկորդիլոսի ատամներով և փոքրիկ դափերով: Այդ բո-  
լորին հետեւում է ընդհանուր ուրախութիւնը, ծիծաղը,  
խօսակցութիւնը և, եթէ աւելացնենք թմբուկների դրսիկոցը,  
գուշ կարող էք երեակայել այն աղմուկը, որը լինում է  
այդպիսի դէպքերում: Երգեցողութիւնը լինում է կամ կո-  
պիտ, կամ մելամաղձոտ:

Երգեցողութիւնից յետոյ Կոտաօն տանում է զօրքը ու  
հաւասար տեղ կանգնեցնում են Carré (քառանկիւնի ձեեռով):

Ինքը այդ ժամանակ զարդարված է լինում աքաղաղի փետուրներով: Զօրքը կանգնած է լինում, նիզակները դէպի դետինը պահած: Հէնց որ թմբուկը խփում են, Կօտտօն ցածր ձայնով սկսում է յաղթութեան երգը, և երբ նա բարձրացնում է նիզակը, բոլորեքեանը սկսում են շարժվել դէպի առաջ: Գետինը դողում է նրանց շարժվածքներից: Երգի եղենակը կամ ցածրանում էր, կամ բարձրանում, և դրա համեմատ բարձրանում և ցածրանում են նիզակները, իսկ իրանք շարունակում են առաջ դալ: Ամեն մի ձայն հանելուց երեսում է նրանց կատաղի բնութիւնը, աչքերը փալլում են և ձեռները աւելի ամուր մեղմում նիզակները: Բայց երբ ձայները ցածրանում են, զգացվում էր պատերազմի թշւառութիւնը, տուն ու տեղի ոչնչանալը:

Առաջ գալով, նրանք յանկարծ երեսները դարձրին ու վազեցին դէպի յետ: Կօտտօն կանգնեց մէջտեղ, որտեղ սկսեցին իրար յետեից զինւորները վազել և կազմեցին պտոյտ, ապա նորից կանգնեցի ոռ carré: Երկու մասի բաժանվելով, նրանք վազելով տեղները փոխեցին, ապա աղաղակներով սկսեցին շրջել և, յանկարծ թողնելով, գնացին իրանց բանակները և սկսեցին կատակներ անել ու ծիծաղել: «Կարսղ եմ ասել, որ ես հաշվում եմ այդ պարը ամենաերեւելի և ամենայուզող տեսարաններից մէկը իմ տեսածներից» Ա.Ք. Քիկալայում», աւելացնում է Ստէնլին:

Մօտենալով Բօդօին, Ստէնլին շատ էր անհանգստանում Ստէրզի մասին, որին ուղարկել էր ճանապարհ գցելու նամակատարներին:

Յունիսի 8-ին Ստէնլին հասնում է Բօդօ: Առաջինը երևում է Ստէրզը, յետոյ Նէլսոնը, ապա և մնացածները: Բանից գուրս է գալիս, որ երբ Ստէրզը գնում է ճանապարհ գցելու գնացողներին, հեղեղների պատճառով ջերմ ու տենդ է սկսվում և ինքն էլ նոյնպէս հիւանդանում է: Մարդկանց ոտերը և

մարմինները սկսում են ծածկվել ախտերով, որոնց տեսքը և գարցահոտութիւնը մարդու զզվանք էին պատճառում: Ճանապարհների դժվարութիւնները, անձրևները, ջերմ ու տենդը և ախտերը կատարում են իրանց մահաբեր գործը. 56 հոգուց ճանապարհին 42 մեռնում են և միայն 14 հոգի են հասնում Բօդօ: Ա.Հա այս էր պատճառը, որ Ստէրզը չէր եկել Ստէնլիին հասել:

Ստէնլին գտնում է Բօդօն շատ լաւ դրութեան մէջ: Շուտով հաւաքում են ցանքսերը և բնակիչների առօրեալ պարապմունքը լինում է հացահատիկներ աղելը, շորեր կարկտելը և այլն, և այլն: Նրանց շատ նեղացնելիս են եղել անհանգիստ թզուկները, բայց մի քանի անգամ պատժվելուց յետոյ այդ փոքրիկ աւազակները հարկադրվում են յետ քաշվելու:

Մի օր Ստէնլին կոչում է անում ցանկացողներին գնալ Բարտուլոտին օգնութեան: Բացի վեց հիւանդից, մնացեալները իրանց համաձայնութիւնն են յախնում: Դրանցից Ստէնլին ջոկում է դիմացկաններին: Բօդօին հրամանատար նա նշանակում է Ստէրզին, տալով մի քանի հրամաններ: Ալգտեղ է թողնում և բժիշկ Պարկէին և Նէլսոնին, որովհետեւ ամեն մի եւրոպացի միայն բեռն է աւելացնում, որի փոխարէն կարելի է կրել տալ ուտելեղին: Դրա համար նա վճռում է գնալ մենակ:

## IX.

Յունիսի 16-ին, վաղ առաւօտեան, լի բարի յուսով գէպի ապագան, նա ճանապարհ է ընկնում դէպի անտառը, դէպի այն մութ ու մոալլ հրէշը, որը արդէն այնքան գոհէր էր կլանել նրանցից:

Մի քանի օրից յետոյ էքսպեդիցիան մտնում է անտառը:

Նորից սկսվում են տանջանքները: Մէկ տեղ մարդիկ անզգուշութեամբ կոխում էին ոտով սրածալը թունաւորված և խոտում ծածկված ճիպոտները, միւս տեղ մէկը վիրաւորվում է գնդակով, որը վայր էին ձգել վառած խարոյի մօտ, մի ուրիշը նետով է վիրաւորվում, և այն, և այն. տմեն մի քալում մարդիկ մեռնում էին ճանճի պէս: Մի տեղ տեղ գնում էին անդունդի ծալրով, որտեղ մի սխալ քայլը բաւական էր, որ մարդ գլորվէր ներքեւ. մի այլ տեղ գետի վրայով սիտի անցնէին կամուրջով, որը բազկացած էր միտին մի գերանից:

Ամենքը հիւանդացել էին զանազան ախտերով: Դրանց տեսքը, ճանապարհի անյարմարութիւնները, միջատների նեղացնելը, ջերմ ու տենդը, սարսափելի տաքութիւնը և քաղցը իրանց գործը տեսնում էին:

Ստէնլին դարձել էր ոսկորներով լիքը պարկ, բայց նրա մէջ կար հաստատ կամք և նոյնպիսի էլ ոգի:

Օգոստոսի 10-ին, այսինքն 57 օրից յետոյ, երբ նրանք դուրս էին եկել Բոդօից, նրանք հասնում են Ուգարրուէ: Այդտեղ Ստէնլին պատաշչում է այն մարդկանց, որոնց նառագործութեամբ էր և ամիս առաջ: Դրանց չէր յաջողվել հասնել Բարտակէլոտին, բայց այն նեղութիւնները, որ նրանք են կրել, գերազանցում են ամեն ինչ: Ճանապարհին, բացի բոլոր չարիքներից, ստիպված են եղել ամեն մի քայլափոխում կռվելու վայրենիների հետ, այնպէս որ 20 հոգուց չորսը մեռնում են, տասն և հինգը վէրքեր են ստանում և միայն մէկն է անվնաս մնում: Վիրաւորվածները բոլորն էլ առողջանում են, բացի մէկից, որը մեռնում է: Այդ գէպքը տեղացնում է Բարտակէլոտի մասին ունեցած երկիւզը: Ոչ մի լուր չունենալուց յետոյ, այդպիսի աննպաստ պայմաններում, երկիւզը շատ հասկանալի է:

Օգոստոսի 17-ին, նաւակներ նստելով, նրանք առաջ են

գնում: Նուտով նրանց երեսում է մի գիւղ: Ստէնլին, վերցնելով հեռադիտակը, նշմարում է ծանօթ գրօշակը:

— Տղայք, մայօրը այստեղ է, բացականչում է Ստէնլին, ոտքի կանգնելով:

Օդը թնդում է կեցցէներով և շուտով հասնում են գիւղին: Պատահած մարդկանց հարցնում են, ում մարդիկն են. նրանք պատասխանում են, թէ Ստէնլիինն են:

Նկատելով մի եւրոպացու, Ստէնլին կարծում է, թէ դա է մայօրը, բայց մօտենալով տեսնում է, որ միսթեր Բօննին է, որը վերցրած էր երբեւ բժշկի օգնական:

Բարեկելով նրա հետ, Ստէնլին հարցնում է.

— Ո՞րտեղ է մայօրը, երեսի առողջ չէ:

— Մայօրը վախճանվել է, սէռ:

— Վախճանվել է: Ողորմած Աստուած: Ինչու է մեռել, ջերմ ու տենդ է եղել, թէ ի՞նչ:

— Ոչ, սէռ, նրան գնդակահար են արել:

— Ո՞վ:

— Մանիեմները, Տիպակ-Տիպակի մարդիկը:

— Աստուած իմ: Խակ Զեմեսօնը որտեղ է:

— Ստէնլեան ջրվէժների մօտ:

— Ի՞նչ հարկաւորութիւն ունի այնտեղ:

— Նա գնացել է բեսնակիրներ բերելու:

— Բայց որտեղ են միսթեր Ուօրդը, Տրուպը:

— Միսթեր Ուօրդը Բանդալայումն է:

— Բանդալայում: Ի՞նչ է անում այնտեղ:

— Ճիշտ է, սէռ, Բանդալայումն է, իսկ միսթեր Տրուպը մի քանի օր առաջ ուղարկված է հայրենիքը տուղջապահու:

— Ուրեմն դուք այստեղ մենակ էք:

— Այն, սէռ:

Աչա այն տիսուր տեղեկութիւնները, որ իմանում է

Ստէնլին։ Ոմանք ուրախանում ու պարում էին, որ նորից տեսնվում են, ոմանք էլ լալիս էին, իմանալով իրանց բարեկամների մահվան լուրերը։

Յետոյ յայտնվում է, որ Բարտուլոտի մահվան պատճառը լինում է Հէնց ինքը։ Կարգադրված էր, որ նա Տիալպօ-Տիպից ստանալ պայմանաւորված օգնութիւնը և առաջ գնալ, իսկ եթէ նրանք ժամանակին չը գան, չը սպասէ, այլ առաջ գնալ։ Բայց, փոխանակ առաջ գնալու, մալորը Զեմեսօնին ուղարկում է Ստէնլեան ջրվէժները բեռնակիրներ հաւաքելու, իսկ բեռնակերների փոխարէն եկել էին մի քանի մարդիկ, որոնք սկսել էին պարապվել շրջակալքում աւարառութիւններով։ Այդ ժամանակ մարդիկ մեռնում էին ուտելեղէնի պակասութեան պատճառով, որովհետև տեղացիները պաշար հասցնելը դադարեցրել էին։

Վերջապէս համնում են Զեմեսօնի հաւաքած բեռնակիրները և յունիսի 11-ին 1888 թ. լէտէնանտ Բարտուլոտը, միսթեր Բօննին և Զեմեսօնը դուրս են գալիս 900 մարդկանցով։ Անբաւականութիւններ միշտ պատահում էին Տիալպօ-Տիպի մարդկանց հետ, որոնց շատ դժվար էր սովորցնել մի որևէ կարգ ու կանոն։

Մալորի մահվան պատճառը հետեւելը է լինում։

Մէկ օր մի կին սկսել էր թմբուկ զարկել և երգել։ Անյաջողութիւններից գրգռված, մալորը ուղարկում է իր 13 տարեկան ծառալին, Հրամայելով լոել։ Իսկոյն լսվում են երկու պայթոց։ Մայօրը ուղարկում է մի քանի մարդիկ մեղաւորներին բռնելու, իսկ ինքը, վայր ցատկելով անկողնից, վերցնում է ատրճանակը և, վրանից դուրս գալով, աղաղակում է։ «առաջինը նրան կը սպանեմ, ուժ տեսնեմ հրացան արձակելիս»։ Այդ ժամանակ Բօննին, որին և պատկանում է այդ պատմութիւնը, ասում է, որ աւելորդ է ժողովրդի կարգերին դիպչել։ Դրանից յետոյ մալորը մօտենում է

կնոջը և հրամայում է, որ դադարեցնէ թմբուկ զարկելն ու երգելը։ Նոյն ըոպէին կնոջ մարդը հրացանը արձակում է և զնդակը դիպչում է ուղիղ մալորի սրտին։ Բօննին վերցնում է դիպակը, կարում է մի քսակում և, անտառում մի փոս փորել տալով, անտեղ թաղում է։

Այդ ժամանակ վերադառնում է Զեմեսօնը, որը գնացել էր նորից Տիալպօ-Տիպի մօտ օգնութեան։ Պատժելով սպանողին, Զեմեսօնը ինքն էլ հիւանդանում է ջերմ ու տեսնդով և մեռնում է։

Հէնց այդ օրը հասնում է Ստէնլին Պանալիա, որտեղ մեռնում է Զեմեսօնը։ Խնչ որ նա այստեղ տեսնում է, դժվար է երևակալել։

Աչա թէ ինչպէս է ինքը պատժում։ «Թէպէտ աւանդարդը թւով պակասել էր և այնպիսի ցնցոտիներում էր, որ առաջգալ ընկերները ընդունեցին նրան ճանապարհից հաւաքած տեղացիների ամբոխի տեղ, բայց ինչպէս կարելի էր մեղ, նորեկներիս, համեմատել այդ դժբաղդների հետ, որոնց մենք հանդիպեցինք Պանալիայում։ Այն, ինչ որ մենք այնտեղ տեսանք, չէ ենթարկվում նկարգրութեան։ Մեղ շրջապատել էին մարդկային կերպարանքը կորցրած մարդիկ, այլակերպված ժանտախտով, բոլորը վէրքերով, զզվելի թէ տեսքով և թէ հոտով, կամ դիսենտերիալից ուժասպառված և արիւնի պակասութիւնից մինչեւ կմախքի աստիճանը հասած։ Նրանք, ոլժից վեր սողալով, մօտենում էին մեղ և ողջունում այս գարչուրելի հանգստարանում։ Նրանց շրթունքներից ես լսում էի նրանց տանջանքների պատմութիւնը, որոնց մասին այնքան պերճախօս էր նրանց տեսքը։ Իմ հայեցքս հանդիպում էր մեռնողների հայեցքներին։ Նրանք սպասում և աղաջում էին փրկութիւն։ Խորին վիշտը ինձ տիրեց։»

Միւս օրը պատրաստվելով, Ստէնլին ճանապարհ է ընկնում, նախապէս տեղացի առաջնորդներին յայտնելով. «Եթէ կամենում էք, եկէք, եթէ ոչ ոչ, ես ձեզ չեմ կարօտում, թէպէտ դուք ինձ կարող էք օդնել և գրա համար վարձ ստանալ»։ Ալդպիսի բովանդակութեամբ էլ մի նամակ է դրում Տիպո-Տիպի վրայ։ Ստէնլիի այդ վարվողութիւնից երեսում է, որ նա լաւ գիտէր սեամորթների բնութիւնը։ Երբ որ շատ էք խնդրում, նրանք կարծում են, թէ առանց իրանց բան գլուխ չի գալ, և սկսում են նեղացնել, յուսալով, որ մի բան էլ կաւելացնէք։

Էքսպեդիցիան նորից ուղղվեց դէպի Ալբերտ-Նիխանսան արդէն երրորդ անգամը։ Ճանապարհին ահազին նեղութիւններ էին կրում կենսական մթերքների պատճառով։ Մարդեկ գնում էին որսի և մի կտոր մսի համար իրանց զցում էին վայրենիների և գազանների ճանկը։ Մի ժամանակ սովը հասել էր այն աստիճանին, որ Ստէնլին կարծում էր, թէ ինքն էլ սովամահ պիտի լինի։ Այդ անելաննելի դրութիւնից մի կերպ ազատվելու համար Ստէնլին յանձնում է Բօննիին մնալ տեղը հիւանդներին հետ, իսկ ինքը, վերցնելով իր հետ գեռ ոչ բոլորովին ուժասպառվածներին, առաջ է գնում մի որեւէ պաշար ճարելու։ Բարեբաղդաբար միւս օրը նա հանդիպում է իր մարդկանց մեծ աւարով։ Երեակալեցէք, թէ այդ քաղցած, սովամահ և կիսամեռ մարդիկ ինչպէս են ընդունում Ստէնլիի վերադարձը։ Տեսարանը իսկոյն փոխվում է. վառվում են խարուկները և եփվում է կերակուրը։

Առհասարակ սովի պատճառը լինում էին կարճամիտ բեռնակիրները։ Յուսները գնելով, որ ճանապարհին բան կը ճարփի, նրանք գէն էին ձգում իրանց յանձնված մթերքները

բեռները թեթևացնելու համար և չէին կարծում, որ այդ վարմունքից շատերի կեանքը կը զոհվի։

Նուտով համնում են ամրացրած Բօդօ աւանին։ Արտերը լաւ հունձ էին տւել և մարդիկ, բացի մի քանիսից, առողջ և զւարթ էին։ Խմանալով, որ փաշալի և Զեֆիսոնի մասին ոչ մի տեղեկութիւն չը կայ, Ստէնլին պատրաստվում է առաջ գնալ։

Այդ ժամանակ նա ստանում է Զեֆիսոնից նամակ, որի մէջ վերջինս յալտնում է, թէ երկու սպաներ ժողովրդին մոլորեցնում են, յալտնելով, որ նամակները կեղծ են և որ Ստէնլին ցանկանում է դրանց գուրս բերել ալստեղից ու գերութեան տալ անգլիացիներին, ուստի խորհուրդ է տալիս զգոյշ լինել։

Հինգ օրից յետով Ստէնլին գուրս է գալիս Բօդօից, նախապէս նրան ալրելով, և ուղերգում է դէպի Նիխանսա։ Հասնելով Բանդեկորէ գիւղը, Ստէնլին թողնում է այստեղ Ստէրգին և բժշկին հիւանդների հետ։

Դուրս գալով անտառից, նա հասնում է Մազամբօնիի հողերը, որի եղբայրքը յալտնում են, թէ փաշան 10 մարդ էր ուղարկել նրանց յետեկց։

Այդ ժամանակ էմինի իշխանութիւնը թուլացել էր, ոչ ոք նրան չէր լսում, և երբ մի բան պէտք էր կարգադրել, նա հրամայելու փոխարէն խնդրում էր։

Նուտով սկսեցին և խառնակութիւնները։ Խոռվարները մտադիր էին բռնել փաշալին և հարկադրել վերադառնալ հիւանդալին ճանապարհով։ Կանխապէս իմանալով այդ դիտաւորութիւնների մասին, փաշան թողնում է Վագիլան և անցնում է Մսուեա։

Տեսակցութեան ժամանակ փաշան յայտնում է Ստէնլիին,  
որ երբ Զեֆսօնը կը կարդայ խեգիւի հրամանը, խռովա-  
րարները կը համոզիւն, որ նա եկել է նրանց ազատելու:

Առաջին խռովութիւնը լինում է Լաբօրէյում: Այդտեղի  
հրամանատարը լինում է մի ոմն Սուրօրէ-Աղա, ազատութիւն  
ստացած ստրուկ և սարսափելի ֆանատիկոս: Ինչպէս յետոյ  
յայտնվում է, բոլոր խռովութիւնների հեղինակը նա է լինում:

Օգոստոսի 13-ին բոլորեքեանը հրատիրվում են լսելու  
խեգիւի հրամանը, որ պիտի կարդար Զեֆսօնը:

Դեռ նամակը չը վերջացրած, Զեֆսօնին ընդհատում են  
զանազան կողմերից, և մէկը, առաջ գուրս գալով, յայտնում  
է, որ այդ բոլորը կեղծ է և թէ նրանք բոլորովին Եգիպ-  
տոսից չեն եկել:

Եմինը իսկոյն մօտենում է խռովարարներին նրանցից  
զէնքերը խլելու և կանչում է իր մարդկանց իրան օգնելու:  
Բայց այդ բոպէին զինւորները շրջապատում են փաշալին և  
Զեֆսօնին ու ատրճանակները դէպի նրանց ուղղում: Փաշալի  
ծառայողները բոլորեքեանն էլ փախչում են: Մէկը թագ-  
նվում է ծառի ետեւում, միւսը վագում է խրճիթը և մահ-  
ճակալի տակ թագնվում, մնացածներն էլ շւարած՝ ամեն  
մէկը իր գլխի ճարն է քաշում: Փաշան մերկացնում է իր  
սուրը և միայն սպաների միջամտութիւնն է նրան ազատում:

Մի շաբթից յետոյ, երբ գալիս են Դուֆիլէ, փաշան և  
Զեֆսօնը բոնվում են Վագլէ-Մօլլա-Աղա անունով խռովա-  
րար սպալի կարգադրութեամբ, որը իրան հրատարակում է  
նաշանգապետ:

Խռովարար սպաները ուզում են զրկել փաշալին բոլոր  
իրաւունքներից, բայց նա ազատվում է շնորհիւ հաւատա-  
րիմ մնացած զինւորներին:

Ծանր էին անցնում փաշալի և Զեֆսօնի օրերը: Խռո-  
վարարները մի քանի անգամ արդէն դատ էին սարքել

նրանց վրայ:

Մի անգամ Զեֆսօնին կանչում են խռովարարների  
խորհուրդը հարցաքննութեան ենթարկելու և խեցիւի, նու-  
բար-փաշալի և Ստէնլիի նամակները կարդալու:

Մի քանի վայրկեանից յետոյ խորհրդի քարտուղարը  
տեղից վեր է թռչում, նամակը շպրտում գետնին և յատ-  
նում նրան ու Ստէնլիին ինքնակոչ, իսկ նամակները կեղծ:  
Խորհուրդը վերջանում է շատ աղմկալի և Զեֆսօնը այն  
եղրակացութեան է հասնում, որ խռովարարները մտադրվել  
են Ստէնլիի գալուն պէս յարձակվել նրա վրայ և խլել  
բոլոր մթերքը ու գէնքերը:

Մէկ օր լուր է գալիս, որ մահիվականները մօտենում  
են ահազին թւով: Նրանց գլխաւորը, Օմար-Սալէն, մի  
նամակ է ուղարկում Եմինի վրայ, խորհուրդ տալով նրան  
հպատակնել և հնազանդվել Մահիվի սուրբ կամքին, որի  
փոխարէն խոստանում է զանազան բարիքներ: Այդ գրու-  
թիւնը տանում են եղել երեք դաւրիշ, որոնց խռովարարները  
ճանապարհին բռնում են:

Իմանալով նամակների բովանդակութիւնը, նրանք  
սկսում են հարց ու փորձ անել դաւրիշներին Մահիվի զօրքի  
մասին: Տեսնելով, որ նրանք լուռ են մնում և մի խօսք  
անգամ չեն արտասահնում, սկսում են նրանց տանջել: Պա-  
տելով գլուխները թոկով, որի երկու ծալրը կապում են  
փալտից, սկսում են փալտը պատեցնել, այնպէս որ թոկը,  
կամաց-կամաց մսի մէջը մտնելով, համնում է մինչև ոսկորը:  
Զարհուրելի էր այդ տեսարանը: Թշվառականների բոլոր  
զերը վերին աստիճանի լարված էին, բայց, չը նայած այդ  
անտանելի տանջանքներին, նրանց շրթունքներից չը թռաւ-  
ոչ մի հառաջանք և ոչ մի տրատունջ, այլ միայն կրկնում էին,  
որ Սատուած կը պատժի նրանց դրա համար: Այդ աստիճա-  
նի էր նրանց հաւատը դէպի իրանց ինքնակոչ մեսսիան:

Երբ որ ուշաթափ են լինում, նրանց ուշքի են բերում ու տանում են բանդը, իսկ մի քանի օրից յետով, գետի ափը տանելով, մահակներով սպանում են, երևակայելով, որ նրանց գնդակը չի վնասիլ:

Մահականները շուտով վերցնում են Շէջաֆը և սարսափը տարածվում է ամեն տեղ: Փաշալի և Զեֆսօնի դրութիւնը աւելի ևս վատթարանում է: Ամեն օր նրանք սպասում են մահականներին, զինւորները անիծում էին սպաներին, որոնք թոյլ չը տեցին հետեւ իրանց փաշալին: Խոռվարար սպաները չեին կարողանում հնազանդեցնել զինւորներին և ամեն օր մի քանի, մէկը միւսին հակառակ, հրամաններ էին արձակում: Սպաները գլուխները կորցրել էին և սպասում էին Ստէնլիի գալուն. նրանք միայն այժմ էին հասկացել, որ Խարտումը խսկապէս վերցրած է: Փաշալին և Զեֆսօնին ոչ թողնում էին գործել և ոչ էլ հեռանալ: Շուտով խոռվութիւններ են ծագում և զինւորները պահանջում են, որ փաշան ազատվի: Ազատելով փաշալին և Զեֆսօնին, նրանց ուղարկում են Վադիլա, որտեղից նրանք պիտի գնալին Բօդօ Ստէնլիի հետ միանալու: Երբ փաշան Վադիլալից հեռանում է, իսկոյն նորից խոռվութիւններ են ծագում. յայտնում են, որ փաշան կամենում է նրանց մատնել, ապա կապիտան Կազիտիին և Զեֆսօնին բռնում են և դատապարտում մահվան պատժի: Ալդախոսվ երկու եւրոպացւոց դրութիւնը շատ կիրիտիկական էր. մի կողմից խոռվարաններն էին սպասում, միւս կողմից մահականները:

Ստէնլին մի նամակ է գրում Զեֆսօնին, որ Եթէ միշոց ունի, գերութիւնից փախչի և գայ, մի նամակ էլ ուղարկում է փաշալին: 10 օրից յետով Ստէնլին ստանում է փաշալից իր նամակի պատասխանը, որի մէջ նա գրում է, որ արդէն 2 շոգենաւով նա բերել է վերադառնալ ցանկացողներին և որ մի քանիսը խնդրում են, որ գնալը յետաձգվի,

մինչեւ որ բոլորը կարողանան հաւաքվել: Իվերջոյ աւելացնում է, որ իր հապատակների անհաւատարմութեան մասին նա այլես երկիւղ չէ կրում և կարող է նրանց վրայ վստահ լինել:

Զեֆսօնի գրած նամակի հետեւանքը այն է լինում, որ փետրվարի 6-ին 1889 թ. նա ինքը գալիս է Կաւալլի աւանը:

—Ես վախեցալ, —ասում է Ստէնլին, —լսելով ինձ մօտ Զեֆսօնի ձայնը, որը ասում էր. «Սանտիմենտալութիւնը փաշալի ամենաոխերիմ թշնամին է: Ոչ ոք նրան չի պահում այստեղ, բացի իրանից»:

Ալդախոսի կարծիք ունէր Զեֆսօնը փաշալի մասին: Առհասարակ փաշան, Կազատին և ուրիշները ոչ մի որոշ վճռի չեին եկել: Ստէնլին սովորել էր հետեւալը լսել.

Փաշալից. «Եթէ իմ ժողովուրդս գնում է, ես էլ եմ գնում, իսկ եթէ նա մնում է, ես էլ եմ մնում:

Կազատիից. «Եթէ փաշան գնում է, ես էլ եմ գնում: Եթէ փաշան մնում է, ես էլ եմ մնում»:

Հաւատարիմ հապատակներից. «Եթէ փաշան կը գնայ, մենք էլ կը գնանք: Եթէ փաշան կը մնայ, մենք էլ կը մնանք»:

Մինչգեռ փաշան հաւատում էր իր հապատակներին և խնդրում էր նոր յետաձգութիւն, Ստէնլին, ընդհակառակը, նրանց ոչ մի հաւատ չէր ընծալում և բոլորովին այլ կերպ էր մտածում:

Խոռվարանները, լսելով Ստէնլիի գալը, անշուշտ կարծում էին, որ նա մեծ ոլժով է եկել: Խարտումը վերցրած էր, իսկ Մահակին օր ըստ օրէ հզօրանում էր: Պարզ է, որ նրանց համար ձեռնատու էր, մի գիշեր մօտենալով, յարձակվել նրանց վրայ, խլել բոլոր եղածը և իրանց մատնել Մահակիին: Ստէնլիի այդ մտածողութիւններից երեւում է, թէ ինչքան նա չէր հաւատում փաշալի հապատակներին: Միքանի օրից յետոյ գալիս են 10 հզգի Ստէնլիի մօտ և, համբուրելով նրա ձեռները, յայտնում են իրանց հաւատարմութիւնը:

Փետրվարի 17-ին փաշան, Կազիտին և հարիւր քառասուն մարդիկ գալիս են Ստէնլիի բանակը, իսկ 18-ին դալիս է Ստէրզը Մաղամբօնիի մարդկանց հետ:

Ստէնլին յայտնում է եղիպտացիներին, որ նա հաւաքվելու ժամանակ է տալիս մինչև ապրիլի 10-ը, որից յետու նա այլևս ոչ ոքի չի սպասիլ և առաջ կը գնալ:

Նույտով երկրորդ խումբն է գալիս, որը նամակ է բերում խոռվարաներից: Նրանց մէջ նորից ծագում են խոռվութիւններ և գլխաւորութիւնը անցնում է ուրիշի ձեռքը:

Այդ լուրերը յուսահատեցնում են փաշալին: Բայց աչանա ստանում է նորից մի նամակ խոռվարաների գլխաւորներից, որոնք խնդրում են իրանց էլ հետները վերցնել:

Փաշան հազորդում է Ստէնլիին այդ «ուրախ լուրերը» և յայտնում է, որ բոլորի հաւաքվելու համար հարկաւոր է երեք ամիս: Ստէնլին, ինչպէս ասացինք, բոլորովին չէր հաւատում փաշալի հպատակներին և այս անգամ նա միանգամայն դէմ էր որ և է յետաձգութեան:

Կանչելով բոլոր սպաներին և մարդկանց, Ստէնլին բացատրում է նրանց իրանց գալու նպատակը, լիշեցնելով, որ նրանք եկել էին փաշալին և նրա հպատակներին այստեղից դուրս բերելու, և աչա մի տարի է, ինչ որ նրանք իզուր ուշացել են, և բացատրում է այն հետևանքները, որ տեղի կունենան նոր յետաձգման պատճառով:

Այդ խորհրդում վճռվում է առանց ուշացնելու ճանապարհ ընկնել դէպի յետ:

## XII.

Դժվար էր փաշալի և Կազիտիի համար թողնել այն երկրը, ուր նրանք ընդելացել էին և այնքան աշխատել էին: Վերջապէս ապրիլի 10-ին էքսպեդիտացիան ճանապարհ

է ընկնում դէպի յետ, ունենալով 1510 մարդ:

Երկու օրից յետով Ստէնլին շատ վտանգաւոր կերպով հիւանդանում է, այնպէս որ նրա առողջանալու մասին շատ քիչ յուս է մնում: Նա այնքան թուլանում է, որ առանց կողմնակի օգնութեան չի կարողանում մի կողմից դէպի միւս կողմը պարանվել: Այդ հանգամանքից օգտվելով, մէկը ծածուկ խոռվութիւն է սարքում: Բարեբազդաբար բանը բացվում է և խոռվարաը իսկոյն բռնվում է: Այդ մարդը ստրուկ է եղել, որին ազատութիւն է տւել Ստէնլին:

Նրան դատելու համար Ստէնլին, չը նախած իր գրութեանը, հրամայում է դուրս բերել իրան: Նրան նստեցնում են բազկաթոռի վրայ և դուրս են բերում: Աչքերը կրակի պէս վառված, նա բացականչում է:

—Մենք հազար ու մի տեսակ փորձանքների ենք ենթարկվել ու դժվարութիւններ ենք լազմել, որ ձեզ ազատենք, և աչա մեր վարձը: Մահ դրան:

Իսկոյն բռնում են չարագործին և, թոկի օդակը գցելով վիզը, կախում են ծառից:

Ստէնլիի հիւանդութիւնը նրանց մի ամիս ուշացնում է, այնպէս որ էմինի մարդիկը կարող էին համել, բայց նրա «60 հաւատարիմ» մարդկանցից միայն մէկն է գալիս:

Վերադարձ ճանապարհորդութիւնը շատ հարուստ է լինում աշխարհագրական գիւտերով, որոնց մէջ գլխաւոր տեղը բռնում է Ռուվենցօրի սառցալին լեռնաշղթայի գիւտը:

Հատ ճանապարհորդներ աշխատել են գտնել նեղոս գետի սկիզբը և աչա Ստէնլիին է յաջողվում գտնել դրա սկիզբը նոր գտած լեռներում, որոնց ամենաբարձր գագաթին Ռուվենցօրի անունն են տալիս: Բայց դրանից, գտնում են նաև բազմաթիւ գետակներ, լճեր և այլն:

Ռուվենցօրիից դէպի հարաւ-արևելեան կողմը գտնվում է Ալբերտ-Նիանսա լիճը: Թուրս է գալիս, որ բազմաթիւ

գետակները, որոնք թափվում էին Ալբերտի և Զեմլիկ գետի  
մէջ, իրանց սկիզբը այնտեղից են վերցնում: Իսկ Ալբերտ  
լիճը, որի արևելեան կողմից թափվում է նաև Վիկտորիա-  
Նեղոսը, իր ջրերը գուրս է բերում Հիւսիս-արևելեան կող-  
մում և հոսում է գետի պէս, որի անունն է Բահր-էլ-Գհա-  
զալ, կամ սպիտակ նեղոս:


Նանապարհին ամեն մի քայլափոխում կռվով էին առաջ գալիս, այնպէս որ մարդկանց կեսը ոչնչանում է:

Մօտենալով Բագամօյօին, որտեղից երևում էին Հնդկական սվկիանոսի ջրերը, Ստէնլին ցուց է տալիս Փաշալին դէպի երևացող տեսարանը և ասում է. «Աչա, Փաշալի, այժմ մենք տանն ենք»: «Փառք Աստուծոյ», պատասխանում է նա: Խսկոյն լսվում է բերդերի թնդանօթների որոտալը, հաղորդելով գրանով Եմին-Փաշալի գալը: Քաղաքը զարդարված էր գրօշակներով, իսկ զօրքերը կանգնած էին պատերազմական ձևով:

Այդ օրը, երեկոյեան 7 ժամին, ճաշ էր, որը վերջանում է շատ տխուր. փաշան իր կարճատեսութեան պատճառով պատուհանը դրան տեղ է ընդունում ու, վայր ընկնելով, ծանր հիւանդանում է, այնպէս որ նա կարողանում է Զանգիբար գալ միայն մարտի սկզբին 1890 թ.: Ստէնլին հասնում է Զանգիբար գեկտեմբերի 5-ին 1889 թ. և այնտեղից ուղևորվում է Եւրոպա:

Թէպէտ նրա գիւտերը և օգնութիւնը մեծ էին, բայց  
չը պէտք է մոռանալ, որ գրանց պատճառով բաւական  
մարդկանց կեանքը՝ 620 զանգիւթարցիներից վերա-  
դառնում են միայն 225 մինչև 60 սուզանցիներից վերա-  
դառնում մարդ, միակ եւրոպացիներից Բարտաշ-  
րուր օպունիւմ է աչեմենոննել մեռնում է ջերմ ու տենդից:

Ապահով վերափոխութեան այդ երևելի ծառապարտութեան



2n

754

7660

0003627

2013



